10170
8

336
Ф-58

1931

2010

Կ.Կ:336
Գ-5
336
Ֆ-58

# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

# ԿԻՑ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

## № 1

ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ Ե
ՀԱՇՎԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՐԱԿԱ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԻՖԼԻՍ
1931

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
12001

336
Ֆ-58
8238

## Դասախոսությունների „Հավելվածը" և նրա խնդիրները.

ՀՍԽՀ ֆինժողկոմի նախկին ֆինանսա-տնտեսական կենտրոնական հեռակա դասընթացների ուսանողների հետ ունեցած աշխատանքի փորձը, դասընթացների հենց առաջին քայլից ցույց տվեց, վոր վոչ ուսանողներին մեթոդապես միանգամայն ճիշտ կազմված ուսուցման նյութեր մատակարարելը, վոչ էլ անհատական գրագրությունն ուսանողների հետ չեն լուծում ուսուցման կանոնավոր կազմակերպման խնդիրը վոչ մեթոդական, վոչ էլ ակադեմիական տեսակետից: Յերբ ստացիոնար դպրոցի ուսանողը, ամբողջ ժամանակ գտնվելով դպրոցի անմիջական հսկողության տակ և մշտապես շփվելով դասատուի հետ, հնարավորություն ունի անընդհատ լրացնելու դասագրքով չտեղ բերած գիտելիքները դասագրքի մեջ ընդգրկված կենդանի իրականության նորագույն փաստերով և կանոնավոր կերպով յուրացնելու այն իր դասընկերների հետ ունեցած շփումով և դասատուի ղեկավարությամբ, հեռակա դպրոցի ուսանողը շատ դեպքերում զուրկ է այդ բոլոր հնարավորություններից:

Ուստի հեռակա դպրոցի առաջ դրված է շատ բարդ և կարևոր խնդիր՝ ուղիներ գտնել այդ բացերը լրացնելու, դպրոցի և ուսանողի միջև ավելի սերտ կապ հաստատելու համար. Հեռակա դպրոցը պետք է գտնի աշխատանքի այնպիսի ձևեր, վորոնք առավելագույն չափով ուժեղացնեին իր ազդեցությունն ու մոտեցնեին հեռակային:

Այդ ձևերից մեկի — կոնսուլտացիոն հենակետերի մասին՝ հեռակաների ամենից ավելի կուտակման վայրերում — մանրամասնորեն խոսվում է ներկա „Հավելվածում" զետեղված հոդվածներից մեկում, սակայն մեր աշխատանքը հեռակա ուսանողին մոտեցնելու այդ ձևը դեռ ևս չէ սպառում խնդիրը: Մեր ուսանողների չափից դուրս ցրված լինելը Խորհ. Անդրկովկասի ամբողջ տերրիտորիայում հնարավորություն չէ տալիս մեր հենակետերով լիովին նրանց ընդգրկելու և բացի դրանից նույնիսկ լիովին ընդգրկելու դեպքում կոնսուլտացիոն բյուրոները չեն լուծում ամբողջապես ուսուցման պլանաչափ կենտրոնացրած ղեկավարության խնդիրը:

Կոնսուլտացիոն բյուրոները, չնայած նրանց գնահատելի աշխատանքին, զրկված են սակայն այն մի շարք հնարավորություններից, վոր լրիվ չափով ունի ինստիտուտը: Բանն այն է, վոր ուսուցման նյութերի հրատարակությունը, վորքան էլ լավ դրված լինի, չէ կարող մեր [illegible]

399/5

ժամանակ հասնել մեր աչքի առաջ կատարվող անցքերի հոսանությանը, սոցիալիզմի կառուցման ուղեկցող տնտեսական և քաղաքական առաջ շարժման բուռն ընթացքին, այն գիտական մտքի ընթացքին, որ լարված ուժով Խորհրդային Միության առաջ դրված խնդիրների վրա է աշխատում:

Դրան համապատասխան մեր հրատարակած ուսուցման նյութը շարունակ լրացման և բարեփոխման պահանջ է զգում: Պահանջ է զգացվում նաև, որ մեր իրականությունը լուսաբանվի սոցիալիզմի հաղթական առաջընթացության պրոցեսում հանդես եկող նոր փաստերով: Եվ այս ամբողջ նոր նյութը, իրագեն պահել հետագային նրա ուսումնասիրած բնագավառի ընդգրկող նոր երևույթների ընթացքին, մտցնել արդեն իսկ ուղարկված ուսուցման նյութի մեջ այն ուղղումները, որոնց անհրաժեշտությունն առաջ է գալիս կատարվող փոփոխությունների կապակցությամբ — ահա մեր «Դասախոսությունների հավելվածի» հիմնական խնդիրներից մեկը:

Այս խնդիրը մեր կոնսուլտացիոն բյուրոների ուժից վեր է, եղ չենք ասում, որ նրանք չեն կարող ընդգրկել հետագաների ամբողջ ծավալն և բայց դրանից, այդ ամբողջ աշխատանքին անկասկած կենտրոնացում է պահանջում, խուսափելու համար այն ցրվածությունից, որը լիովին հնարավոր է, եթե այդ խնդիրը հանձնելու լինենք ինստիտուտի իրար հետ անմիջական կապ չունեցող կոնսուլտացիոն բյուրոներին: Միայն այն հնարավորությունների ոգտագործումը, որ այդ տեսակետից ունի կենտրոնը, կարող է ապահովել նյութի ճիշտ լրացումն ու նրա հարկավոր վերահսկողությունը:

Այդ իմաստով «Դասախոսությունների հավելվածները» ոչ միայն ուսանողների անհատական գիտելիքները լրացնելուն պետք է ծառայեն, այլև որպես նյութ մեր կոնսուլտացիոն բյուրոների համար, որի վրա նրանք կարող են իրենց աշխատանքը դասագրքի սահմաններից դուրս ուսանողների միջավոր հարցերը լայնացնելու համար:

Սակայն «Հավելվածների» խնդիրները դրանով չեն վերջանում: Ինստիտուտի մեթոդական աշխատանքը, որ զգալի չափով փոխադրված է կոնսուլտացիոն բյուրոների վրա, նույնպես չի կարող սպառված լինել այդ չափով: Ուսուցման ամբողջ ընթացքում մենք կարիք ենք զգալու անհրաժեշտ որոշեն մի շարք ընդհանուր կարգի մեթոդական ցուցմունքներ տալ ամբողջ ուսանողական մասսայի համար:

Հեռակա ուսուցումն, ճանաչելով իր այն նշանակությամբ, որ նա ցնում է բերել մեր օրերում, հանդիսանում է ժողովրդական կրթության յուրիտասարդ ճյուղը, որ ընթանում է մեծ չափով որոնումների ճանապարհով, փորձի ճանապարհով, չունենալով նախապատրաստված փորձ, որի վրա



կարող լիներ անհողդողդ կերպով հիմնվել:

Ուսանողների աշխատանքներն ստուգելու և նրանց հետ գրագրություն վարելու ընթացքում, կոնսուլտացիոն բյուրոների ուսանողների հետ շփվելու փորձն ուսումնասիրելու հետևանքով մի շարք մեթոդական հարցեր են ծագում, որոնք դասագրքերը կազմելիս չէին կարող նախատեսվել: Առանձին դիսցիպլինների (գիտության ճյուղերի) և ամբողջ ցիկլերի աշխատանքին վերաբերյալ մի շարք ընդհանուր հարցեր պահանջում են քննարկել ճշտել այդ հարցերը մասնագետ — մեթոդիստների միջոցով և ընդհանուր մեթոդական դիրեկտիվներ տալ, ինչպես մենակ ուսանողներին, այնպես էլ կոնսուլտացիոն բյուրոներին, որպես տեղերում ուսուցման ղեկավարների:

«Հավելվածների» երկրորդ խնդիրն է ծառայել որպես մշտական մեթոդական ցուցմունք յուրաքանչյուր ուսանողի, յուրաքանչյուր կոնսուլտացիոն բյուրոյի համար:

«Ոչ մի ուսանող դպրոցի հասարակական կյանքից դուրս» նշանաբանը, որ է անում մեր առաջ «Հավելվածների» երրորդ մեծ խնդիրը: Կազմակերպել ուսանողական ակտիվ ինստիտուտի աշխատանքի շուրջը, ուժեղ ուսանողական հասարակայնության ուշադրությունն ինստիտուտի գործունեության կարևորագույն մոմենտների վրա, այդ հիմքի վրա կազմակերպել ուսանողական մասսայի ակտիվ մասնակցությունն ինստիտուտի կյանքին — ահա հիմնականում մեր «Հավելվածների» երրորդ խնդիրը, որոնք մեր կարծիքով այդ իմաստով ուսանողական հասարակայնության կազմակերպիչ դեր են խաղալու:

Վերոհիշյալ խնդիրներին համապատասխան «Դասախոսությունների հավելվածները» ստանում են և իրենց կառուցվածքային ձևակերպումը:

Այդ տեսակետից ներկա համարը բնորոշ չէ: Հետագայում, աշխատանքի ծավալման ընթացքում «Հավելվածները» արտահայտելով լիովին այն ֆունկցիաները, որոնք ինստիտուտի ընդհանուր աշխատանքի մեջ իրենց են հատկացրած, բաղկացած են լինելու չորս հիմնական հատվածներից:

1. Ուսուցման բաժին, որն ամբողջովին հատկացված է ուսանողներին ուղարկված ուսուցման նյութը լրացնելու և ուղղելու գործին: Այդ բաժնում պետք է զետեղվեն առանձին հոդվածներ, որոնք նվիրված են լինելու գիտական դիսցիպլինի ուսուցման նյութը բարեփոխելու և խորացնելու նպատակին: Գիտական մտքի նոր նվաճումները տեսական խնդիրներում, նոր տնտեսական-քաղաքական փաստերը գործնական բնույթ կրող հատուկ դիսցիպլիններում լուսաբանում և դրա հետ կապակցված ուսուցման նախկին նյութի ուղղումները — այդ բոլորը «Հավելվածների» ուսուցման բաժնի բովանդակությունն է կազմելու:

2. Ուսուցչին առարկաների մշակման վերաբերյալ մեթոդական ցուցմունքներ, ընթացիկ ուսուցման կազմակերպման և ժամանակի բյուջեի բաշխման խնդիրներ, ստուգողական աշխատանքների կատարման վերաբերյալ ցուցմունքներ, և հաշվետվության պրակտիկայի լուսաբանություն, ստուգողական աշխատանքների թեմաների ձևակերպման վերաբերյալ ցուցմունքներ, աշխատանքների ընդհանուր տիպային սխալներ և այդ սխալների ծագման պատճառների վերլուծում — ահա այն հիմնական մոմենտները, վորոնք „հավելվածների" յերկրորդ մեթոդական բաժնի բովանդակությունն են կազմելու:

3. Վերջապես, „հավելվածների" յերրորդ բաժնում մենք մեր հասարակական կյանքի հետ կապված վերնագրերն ենք ունենալու:

ա) „Ուսանողի եջը", ուր մենք տեղ կտանք մեր ուսանողների նամակներին և առաջարկություններին և այդ նամակների առիթով մեր դիտողություններին:

բ) Այդ նույն բաժնում „Ինքնաքննադատության կարգով" վերնագրի տակ մենք մեր ուսանողական ակտիվի լայն ինքնաքննադատությունն ենք առաջադրելու, ինչպես մեր հանդես բերած միջոցառումներն, այնպես էլ բոլոր ուսանողների առաջարկած միջոցառումներն ու առաջարկությունները և փորձերը, կատարելու յենք ինքնաքննադատության հետևանքով մեր հանած կոնկրետ յեզրակացությունների մասին:

գ) „Ինստիտուտի կյանքը" վերնագրի տակ տալու յենք մեր խրոնիկան, նկարագրած ինստիտուտի կառուցվածքի մեջ տեղի ունեցող փոփոխությունները, նրա առանձին միջոցառումների ձևակերպումը, հեռակա ուսուցման ամբողջ սիստեմի և ինստիտուտի աշխատանքի վրա նրանց կոնկրետ ազդեցության վերաբերյալ դիրեկտիվներին:

Ամբողջ նյութը համախմբելով մեր մատնանշած բաժիններում, մենք յենթադրում ենք բուռն հետաքրքրության լիովին կապով սպասարկել ուսանողներին այն ամենով, վոր կարող է նրանց, իբրև ուսանողների, հետաքրքրել և հնարավորություն տալ ակտիվ մասնակցություն ունենալ ինստիտուտի կյանքում: Միայն ուսանողական ակտիվի լայն մասնակցությամբ „հավելվածները" կդառնան իրոք հետաքրքիր նյութ, վոր դպրոցն անմիջապես կապում է ուսանողի հետ.

„Հավելվածները" պետք է դառնան յուրաքանչյուր ուսանողի սեղանի մշտական գիրքը և նրա ուշադրության առարկան վոչ պակաս, քան ուսուցման հիմնական ձեռնարկները: „Հավելվածները", ինչպես յերեվում է մեր ասածից, պետք է վոչ միայն կարդալ, այլ մեծ մասամբ պետք է մշակել դասախոսությունների շարքերով, հանելով վերադարձնելով ավելի վաղ



մշակված դասախոսություններին:

Պետք է ապահոված լինի բոլոր ուսանողների առավելագույն ուշադրությունն այն ինֆորմացիայի վերաբերմամբ, վոր ինստիտուտը տալու է „հավելվածների" եջերում. մի բազմազան ինֆորմացիա ինստիտուտի աշխատանքի բոլոր խնդիրների մասին, առանց վորի գիտության ուսանողները կարող են վոչ պակաս բարդությունների հանդիպել մի շարք խնդիրներում — վճարը մուծելու կարգը, աշխատանքը և հաշվետվությունը հանձնելու ժամկետները, դասախոսություններ ուղարկելու, կոնսուլտացիոն բյուրոներ բանալու, կոնֆերենցիաներ գումարելու, պարապմունքների մեջ ընդմիջումներ անելու մասին և այլն:

Անուշադիր վերաբերվելով „հավելվածների" մեջ զետեղված նյութին, ուսանողը կտրվում է ամբողջ ուսանողական կոլեկտիվի հասարակական կյանքից և մեծ չափով նաև ուսումից:

---

Անդրկ. ֆին-տնտեսական ինստիտուտի հեռակա դասընթացների ուսուցման սիստեմն ու մեթոդները:

Ուսուցման մեթոդիկան:

Կադրերի խնդրի լուծումն այն ուղղությամբ, վոր կադրերը լինեն ժողովրդական տնտեսությունը նոր սոցիալիստական սկզբունքների վրա վերակառուցելու և անցնելու վոչ թե խանգարող ֆակտոր, այլ այդ շարժման ոգևոր սկզբունք, պահանջում մի շարք փոփոխություններ և րեֆորմներ մտցնել բարձրագույն և միջին պրոֆտեխնիկական կրթության սիստեմի մեջ:

Անկայն կադրերի խնդիրը չի լուծվում դպրոցները հասարակություններին և ձեռնարկություններին մոտեցնելով և մեթոդական ... ճյուղավորության նշանով, ինչպես վորոշելով համապատասխան դպրոցների նպատակադրումն ու ընթացավարը մասնագետների պրոֆիլը: Կադրեր պատրաստելու գործում բացի վորակային առաջադիմությունից անհրաժեշտ են ավելի վճռական քայլեր և քանակային նվաճումներ: Մինչդեռ ապագայում դպրոցների գոյություն ունեցող ցանցը կադրերի խնդիրը ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերում հնգամյակի վերջում 35–40%-ով է լուծում միայն, իսկ մի քանի մասնագիտությունների նկատմամբ էլ ավելի նվազ չափով:

Այս հանգամանքներով է բացատրվում այն ահագին հետաքրքրությունը հեռակա ուսուցման սիստեմի վերաբերմամբ, վոր արտահայտեցին բոլոր հասարակությունները ու կազմակերպությունները և այն բանը, վոր արդյոք է նա վերջին ժամանակ: Այժմ արդեն կադրեր պատրաստելու գործում պատահական „հավելված" չէ, այլ մի խոշոր ֆակտոր սոցիալիստական շին

բարության նոր կադրեր պատրաստելու ամբողջ սիստեմում, որ հաղթահարել է իր ճանապարհին ընկած բոլոր խոչընդոտները — առանձին աշխատավորների անշարժությունը և անտարբերությունը, մի քանի հաստատությունների կողմից նրա դերի թերագնահատումը և անհասկացողությունը — և ցույց է բերել քաղաքացիական բոլոր իրավունքները: Ինչպես ստացիոնար դպրոցն, այնպես էլ հեռակա ուսուցումն անպայման մեծ ապագա ունի ոչ միայն ընդհանուր սիստեմով պատրաստման գծով, այլ և առանձին մասնագիտական հարցերի վերաբերյալ գիտելիքներ ցույց բերելու իմաստով այն անձանց նկատմամբ, որոնք անցել են արդեն ստացիոնար դպրոցը: Վերջին խնդիրը չորրորդական հարց է, „եգուլմա" հարց է: Այսօր հեռակա ուսուցումը, ստացիոնար դպրոցի հետ ձեռք ձեռքի տված առաջ գնալով, անհագին աշխատանք է կատարում:
Բայց, ինչպես հայտնի յէ, իրավունքներին միշտ պարտականություններ են հետևում:
Կադրեր պատրաստելու գործում հեռակա ուսուցման սիստեմին հատկացրած տեղը պահանջում է հեռակա դպրոցների աշխատանքի մեթոդների և ձևերի այնպիսի կազմակերպում, որ նրանց արտադրանքի որակը ցած չլինի ստացիոնար դպրոցների արտադրանքի որակից:
Դրա իրացումը պահանջում է նախ և առաջ աշխատանքի մեծ պարզություն, ինչպես դպրոցների, այնպես և ուսանողների կողմից, աշխատանքի բարձր հարվածային տեմպեր և հսկայական լարվածություն: Յերկրորդ՝ նա պահանջում է յերկու կողմից էլ (դասատուներից և ուսանողներից) մեծ կազմակերպվածություն և աշխատանքի ռացիոնալիզացիա: Այստեղ ամեն բան պետք է հաշվի առնել, որովհետև յուրաքանչյուր օրը, յուրաքանչյուր ժամը չափազանց թանգ են:

## Ուսուցման պլանը

Այդ պատճառով պետք է կառուցվեն ուսուցման պլանները, որպեսզի ուսանողների միտքը չծանրաբեռնվի ամեն տեսակ անպետք բաներով և միևնույն ժամանակ կարելի լինի տալ բավականաչափ ծավալով այն ամենն, ինչ որ անհրաժեշտ է նրանց համար: Դրան համապատասխան պետք է կառուցվի և հեռակայի ուսուցման մեթոդիկան — օգնել նրան յուրացնելու անհրաժեշտ ուսուցման նյութը, կազմակերպել հեռակայի աշխատանքը, տալ նրան ցուցմունքներ և ուղղություններ դժվար դեպքերում: Նրան անհրաժեշտ է ավելացնել հեռակայի աշխատանքին հետևելը, նրա աշխատանքի հաշվառումը և ստուգումը: Այս բոլոր խնդիրներն աչքի առաջ է ունեցել ինստիտուտն ուսուցման աշխատանքը կազմակերպելիս:
Ինստիտուտի ուսուցման պլանն ընդգրկում է բոլոր սոցիալ-տնտեսա-



կան, գործնական և մասնագիտական դիսցիպլինները, որոնք անհրաժեշտ են տնտեսագետի նախապատրաստման համար ֆինանսների, վարկի և հաշվառքի բնագավառում: Անդրկ. ֆին-տնտ. հեռակա ինստիտուտի ուսուցման պլանը հիմնականում համապատասխանում է ստացիոնար ֆինանսա-տնտեսական բարձրագույն դպրոցների (Բուհ) ուսուցման պլաններին և տարբերվում է միայն նրանով, որ նրա մեջ չկան հետևյալ դիսցիպլինները — զինվորական գիտություններ, մաթեմատիկա և օտար լեզուներ: Աչքի առաջ ունենալով օտար լեզուների մեծ նշանակությունը հեռակա ինստիտուտում նրանք դրվում են իբրև ֆակուլտատիվ առարկաներ:
Ինստիտուտում որոշված է առաջին տարին անցնել հետևյալ դիսցիպլինները — քաղաքա-տնտեսություն, բանկային հաշվառքի հիմունքներ, տնտեսական աշխարհագրություն, վիճակագրության հիմունքներ, տնտեսավարական իրավունք, դիալեկտիկական մատերիալիզմ և ֆինանսական իրավունք: Մի քանի առարկաներ, ինչպես քաղաքական տնտեսությունը, մշակվելու յեն մեկ ու կես տարվա ընթացքում, ուստի դասընթացի մի մասը պետք է անցնել յերկրորդ ուսումնական տարի: Դիալեկտիկական մատերիալիզմն ու տնտեսական աշխարհագրությունն յերկրորդ կիսամյակին են սկսվելու և նմանապես յերկրորդ տարի յեն ավարտվելու:
Տեխնիկումում ուսուցման առաջին տարին անցնելու յեն հետևյալ առարկաները — քաղաքա-տնտեսություն, տնտեսական աշխարհագրություն, վիճակագրության հիմունքները, տնտեսավարական իրավունք, մաթեմատիկա, ռուսաց լեզու և գրականություն, բանկային հաշվառքի հիմունքներ, պետական կազմակերպություն և դասակարգային պայքարի պատմություն:
Հիշված առարկաներից մի մասը կսկսվի յերկրորդ սեմեստրում և նմանապես, ինչպես ինստիտուտում, կավարտվի յերկրորդ ուսումնական տարվա առաջին կեսին:

## Դասավանդության մեթոդները:

Ուսանողներին միաժամանակ կուղարկվեն մեկից մինչև չորս առարկաների նյութ, որոնք հետևաբար կմշակվեն զուգահեռաբար: Այդ արվում է այն պատճառով, որովհետև միևնույն առարկայի վրա աշխատելով ուսանողը շուտով է հոգնում, նրա զգայունությունը բթանում է, այնինչ, անցնելով նոր առարկայի, ուսանողը նրա մշակմանը ձեռնարկում է նոր հետաքրքրությամբ և թարմ նոր ուժերով: Առարկաների և նրանց մշակման բնույթի հերթափոխությունը, օրինակ, սոցիալ-քաղաքական և հետո հաշվային, որոնք պահանջում են մտքի տարբեր լարում, թույլ է տալիս ավելի աշխատելու նվազագույն հոգնածությամբ: Անկասկած

առարկաների հերթափոխությունը պետք է կատարվի վոչ պակաս քան յերկու ժամը մեկ անգամ: Բացի դրանից, առարկայի մշակման խիստ կենտրոնացած մեթոդը, այսինքն նրա փոքր ժամանակամիջոցում անցնելն այն հետևանքն է ունենում, վոր առարկան պակաս կայուն է յուրացվում և հիշողության մեջ պահվում: Այդ չի նշանակում, վոր ինստիտուտն ընդհանրապես նյութի կենտրոնացած մշակմանը հակառակ է, բայց այդ կենտրոնացումը չը պետք լինի չափազանցրած: Չորրորդ կանոն. առարկաների մեծ մասը պրծվելու չե անընդհատ, այսինքն այդ առարկաների հերթական պրակներն ուղարկվելու յեն յուրաքանչյուր հերթական ծանրոցով: Անկասկած, վորոշ դեպքերում հերթական առաջադրությունները, վերոհիշյալ նկատառումներով, կուղարկվեն վոչ իրար հետևից, այլ մեջ ընդ մեջ. Վորպեսզի ուսանողը, նոր նյութ ստանալով, առաջ քան նրա մշակմանը ձեռնարկելը, հարկադրված լինի նախապես աչքի անցկացնել նախընթաց նյութը, վոր ավելի քան մի ամիս դրանից առաջ մշակում եր, կամ նրա վերաբերյալ գրավոր դիտողությունները, և դրանից հետո միայն սկսի նոր ստացված առաջադրության մշակումը: Այդ-պիսի, թեկուզ թեթև կրկնությունն անպայման կնպաստի ամբողջ դասընթացի լավագույն յուրացմանը:

Ուսուցման ամբողջ նյութը դասավորված է բուն ժամանակի այնպես, վոր յուրաքանչյուր ամիս կուղարկվի 15-ից մինչև 20 տպագրական թերթ (տպագրական թերթը հավասար է գրքի 16 եջին): Մինչև ուսանողները կսովորեն բավական կերպով դասավորել ժամանակը, ձեռք կբերեն գրքական նյութի ինքնուրույն մշակման ունակություն, ուղարկելիք առաջին նյութերը կլինեն միջին նորմից պակաս: Ուսուցման նյութի ծանրաբեռնումը պակաս կլինի նաև ուսուցման վերջին տարին, յերբ կատարվում է ստուգողական աշխատանքների մեծ մասը:

Այսպես, աշխատելով տարին տասը ամիս, օրը 2-3 ժամ, դրանից դուրս թողած մեկ ամիս ընդհատման և մեկ ամիս պրակտիկայի համար, հեռակայքը կկարողանա այնքան ուսուցման նյութ մշակել ուսման պլանի մեջ մտցված առարկաներից և նույնքան գիտություն ձեռք բերել, վորքան և ստացիոնար դպրոցների ուսանողը:

Իր ուսուցման և կազմակերպչական աշխատանքի ամբողջ սիստեմով ինստիտուտը ձգտելու յե կազմակերպել և թեթևացնել հեռակայի աշխատանքը և օգնել հեռակայքին:

Ամեն միջոց ձեռք կառնվի, վորպեսզի ուսուցման նյութն ամեն ամիս կանոնավոր կերպով, հավասար ժամանակամիջոցներով ուղարկվի: Ուղարկելիք ուսուցման նյութերն իրենց ծավալով մոտ պետք լինեն միջին ամսական նորմային, առարկաների հերթականությունն ուսումնա — մեթոդական կողմից պետք ունենա խիստ հաջորդականություն: Հիմնականում դա նշանակում է, վոր սկզբից տրվում են ընդհանուր տեսական ֆունդամենտալ դիսցիպլինները, վորոնք ուսանողին հարկավոր պատրաստություն են ապահովում, իսկ հետո արդեն այդ բազայի վրա տրվում են գործնական եկոնոմիկական մասնագիտական առարկաները:



Գիտական առարկաների կառուցման մեթոդոլոգիան և դրանց դասավանդման մեթոդիկան պետք է օգնեն հեռակայքին գտնելու ուսումնասիրած առարկան հասկանալու և յուրացնելու բանալին:

Ուստի Անդր. Ֆ.-Ս. Ռ. ինստիտուտի ուսուցման ձեռնարկները վոչ միայն գիտական պրոբլեմների արձանագրություն են, այլև մեծ չափով նրանք պարունակում են մեթոդական ցուցմունքներ, վորոնք օգնում են հեռակայքին իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելու բուն հիմնական խնդիրների վրա և ցույց են տալիս նրանց լուծման ուղիներն ու յեղանակները: Ուսուցման ձեռնարկի կառուցման սիստեմը, ամբողջական առմամբ, նմանապես և առանձին առաջադրությունների նկատմամբ, միանգամից հարկավոր ուղղություն են տալիս հեռակայի աշխատանքին, նրա նպատակադրմանը:

Վորպեսզի ուսանողն առաջադրությունը մշակելուց հետո կարողանա միանգամից իրեն ստուգել, թե վորչափ ուղիղ է հասկացել և յուրացրել մշակված ուսուցման նյութի հիմնական դրույթները, դասախոսությունների մեջ տրվում են ստուգողական հարցեր: Այդ հարցերի պատասխանները հարկավոր չե ինստիտուտ ուղարկել, նրանք ծառայում են միայն ինքնաստուգման համար: Պատասխանները գրի անցնել օգտակար է, դա կրկնակի օգուտ կբերի. նախ՝ կնպաստի դասընթացի լավագույն յուրացմանը և մտքի մեջ պահելուն, և կդյուրացնի նրա կրկնությունը և յերկրորդ՝ իր մտքերը պարզ և կարճ վորոշելու ունակություն կտա:

Այս դեպքում, յերբ հեռակայքին պատահի վորևէ անհասկանալի հարց, վորն ամբողջ առաջադրությունը մշակելուց հետո և կրկնակի ընթերցանության ժամանակ այնուամենայնիվ անլուծելի մնա, հարկավոր է անմիջապես դիմել կոնսուլտացիոն բյուրոյին: Դասատուներն այդ հարցերին սպառիչ բացատրություններ կտան: Այդ դեպքերում ուսանողները պետք է հետևեն հետևյալ հիմնական կանոնին՝ 1) ամեն մի առարկայից (վոչ հարցից) հարցադրումը գրել առանձին թերթիկի վրա, պարզ ձևակերպելով հարցը. իսկ յերբ դա վերաբերում է ձեռնարկի վորևէ տեղին, անհրաժեշտ է ցույց տալ եջը. 2) պարզ գրել և անպայման նշանակել ամեն մի թերթիկի վրա իր ազգանունը, հաշվանցման գրքույկի համարը և լրակատար հասցեն: Դա զգալի չափով կթեթևացնի ինստիտուտի ուսուցչական կազմի աշխատանքը

և կարգայնի պատասխան ստանալը:
Կարող է պատահել և այնպիսի դեպք, երբ մի որևէ հարց շատ ուսանողների համար պարզ չի լինի, կամ այնքան կրկին կլինի, որ մեծամասնության մեջ հետաքրքրություն կզարթեցնի — այն ժամանակ այդ հարցերի պատասխանները կզետեղվեն «Դասախոսությունների հավելվածներում», որոնք լույս կտեսնեն ծրագրապես ամեն ամիս և կուղարկվեն ուսուցման նյութի հետ միասին:
Հեռակայի աշխատանքը ղեկավարելու էական ձևերից մեկն է ստուգողական աշխատանքների քննությունը: Ամեն մի առարկայից ինստիտուտը տալիս է մեկից մինչև չորս ստուգողական աշխատանք: Թե ինչպես պետք է գրել ստուգողական աշխատանքը, դրա մասին հետագայում ցուցմունքներ կտրվեն հատուկ հոդվածում: Սակայն, այդ ցուցմունքները կրումեն զուտ ձևական բնույթ և ստուգողական աշխատանքների արտաքին ձևակերպմանն են վերաբերում: Աշխատանքի վերլուծումն ըստ էության և նրա գնահատականը կտրվի դասատուների քննադատականներում, որոնք ստուգելու են այդ աշխատանքները: Քննադատականները կտան անհրաժեշտ ցուցմունքներ և ուղղություն հեռակայի աշխատանքին և նրանց ամբողջ գումարը կհանդիսանա ուսանողի առաջադիմության և զարգացման ցուցանիշը: Նրանք գրվում են դասատուների ձեռքով երկ-երկու օրինակ, որոնցից մեկը ստուգողական աշխատանքի հետ վերադարձվում է հեռակային, իսկ երկրորդը պահվում է նրա անձնական գործում: Անհրաժեշտ է նկատի առնել, որ ամեն մի գիտական դիսցիպլինից միաժամանակ մի քանի թեմա է տրվում դասընթացի անցած բաժնի վերաբերմամբ, բայց աշխատանքը պետք է գրել մի թեմայով իրեն ուսանողի ընտրությամբ: Թեմաները կազմվում են այնպես, որ նրանց մեջ լինեն համեմատաբար պարզ և ավելի բարդ թեմաներ, որպեսզի ամեն մի ուսանող կարողանա ընտրել իր ուժերի համապատասխան թեմա:
Առաջին երկու անգամ ուղարկված նյութերում ստուգողական աշխատանքների համար թեմաներ չեն տրվում: Հերթական թեմաները ստուգողական աշխատանքների համար տրվելու են քաղաքա-տնտեսության դասընթացի երկրորդ պրակում, որը երրորդ անգամ ուղարկված նյութերի մեջ է լինում, իսկ հետո „Բալանսային հաշվառքի հիմքեր" դասընթացի երրորդ պրակում, որը չորրորդ անգամվա նյութերի հետ է ուղարկվելու: Համենայն դեպս դրա մասին կհիշատակվի նյութերի հետ ուղարկված նամակներում, որտեղ միաժամանակ կնշվի և ուսանողների կողմից աշխատանքներ ներկայացնելու ժամկետը:
Բայց հեռակայի աշխատանքի ղեկավարության հիշատակված ձևերից ԱԺՖՏԻ ինստիտուտի կողմից կիրառվելու են մի շարք ուրիշ միջոցներ, որոնք ըստ էության միջին տեղն են բռնում ուսուցման հեռակա սիստեմի և ստացիոնար դպրոցի միջև:



Այսպես, ԱԺՖՏԻ ինստիտուտը որոշել է ծավալել կոնսուլտացիոն բյուրոները կոնսուլտացիոն կետերը:
Այդ կազմակերպությունների ու նրանց աշխատանքի բնույթը լուսաբանվում են „Հավելվածների" ներկա համարում զետեղված այլ նյութերում: Ընդհանրապես նրանց աշխատանքն է՝ հեռակային ցույց տալ ամեն տեսակ օգնություն ուսուցման պրոցեսում: Այդ օգնության ձևերը կարող են լինել տարբեր — ծագող դասընթացների վերաբերմամբ տալ բանավոր անհատական և խմբակային կոնսուլտացիա, կազմակերպել խմբակներ, եպիզոդիկ սեմինարիաներ առանձին դիսցիպլիններից ամենակարևոր և բարդ պրոբլեմներ մշակելու համար, այլև տվյալ ռայոնի հեռականերից դպրոցական համագումարներ հրավիրել: Կոնսուլտացիոն բյուրոների համար բազա կհանդիսանան ստացիոնար բարձր և միջնակարգ դպրոցներն իրենց դասատուների կադրերով, գրադարաններով և կաբինետներով:
Այսպիսով, նկատի առնելով հեռակայի աշխատանքի ղեկավարության վերոհիշյալ մի շարք ձևերը, նրա ուսուցման պայմանները զգալի կերպով մոտենում են ստացիոնար Բուհերի ուսանողների ուսուցման պայմաններին:
Բարձր և միջնակարգ դպրոցի կրթությունների մեջ ակտիվ մեթոդներ մտցնելով ծանրության կենտրոնը ուսանողների ուսուցման մեջ փոխադրվում է գրքի վրա ինքնուրույն աշխատանքի ասպարեզը: Դասատուն „Գիտության քուրմից" ինչպես էր պարապմունքների դասախոսական սիստեմի ժամանակ, դառնում է ուսանողի աշխատանքում նրա ղեկավարն ու օգնականը:
Հետևաբար, ժամանակակից պայմաններում ուսանողի աշխատանքը մի առանցքին նշանակություն է ստանում — գրքի վրա ինքնուրույն աշխատանքի և իր աշխատանքը կազմակերպելու ունակության: Այս հարցերի վրա մեզ անհրաժեշտ է մի քիչ կանգ առնել:

## Գրքի վրա աշխատանքի մեթոդները.

Լենինն ասում է. «Մեզ անհրաժեշտ է նախ և առաջ կարդալ, գրել սովորել և կարդացածը հասկանալ»: Անշուշտ, այդ խոսքերը հարկավոր չէ հասկանալ տարրական ձևով: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է կարդացածը հասկանալ բառիս լայն մտքով:
Հեռակա ուսուցումը նպատակ ունի տալ ուսանողին ոչ միայն գիտության որոշ պաշար կամ աշխատանքի համար անհրաժեշտ գործնական ձևեր, քանի որ սոցիալիստական հասարակության ծավալված կառուցման պայմաններում, երբ հնգամյա պլանն է կատարվում և ամբողջ տնտեսությունը վերակառուցվում է նոր սոցիալիստական բազայի վրա և դրա հետ կապված

դասակարգային պայքարն է սրվում, անկարելի է սահմանափակվել միայն գործնական գիտություններ ձեռք բերելով: Անհրաժեշտ է սովորել գործնականապես կիրառել ձեռք բերած գիտությունները և ուրիշներին սովորեցնել, անհրաժեշտ է ունենալ հարկավոր քաղաքական նպատակադրում: Վորպեսզի այդ գիտությունները դառնան կյանքը նոր սկզբունքների վրա վերակառուցելու իրական գործիք, նրանք պետք է ծառայեն միասնական ամբողջական աշխարհայեցողությամբ: Մարքսական պրոլետարական մարքսիստական — լենինյան աշխարհայեցողությունը պիտի դառնա հեռակայի ինքնակրթական աշխատանքի բաղկացուցիչ մասն ու լուծը: Այս դրվածքով է նախորոշվում հիմնականում հեռակայի աշխատանքի մեթոդները գրքի վրա: Մեխանիկորեն անգիր անելը այստեղ չպիտի տեղ ունենա: Ուսուցման պլանի առարկաների ուսումնասիրությունը պետք է կրի քննադատական աշխատանքի բնույթ, վորպեսզի ուսանողը սովորի հասկանալ գիրքը, ըմբռնել հեղինակի հիմնական մտքերը և կիրառել ձեռք բերած գիտությունները հետագայում, գործնական կյանքի մեջ: Միայն գրքի վրա աշխատանքի այդպիսի ձևը կարող է ապահովել թեմայի կամ առաջադրության խորացրած մշակում:

Գիրքը կարդալու և հասկանալու ունակությունը մեծ նշանակություն ունի հեռակա ուսուցման ժամանակ, միայն գրքի վրա աշխատելով կարելի է յուրացնել մեր դպրոցի կողմից տված ուսուցման նյութը:

Այնուհետև գալիս է իր մտքերն արձանագրելու ունակությունը: Ուսուցման հեռակա մեթոդի դեպքում հեռակայի աշխատանքն ստուգելու յեղանակը, նմանապես նրա աշխատանքի ղեկավարությունը հիմնականում իրագործվելու է գրավոր ձևով՝ հեռակայի ցանկով ստուգողական աշխատանքներ գրելը և հարցադրումները, ինստիտուտի դասատուների քննադատականն ու հարցերին պատասխաններ և բացատրություններ տալը — այդ բոլորը գրավոր կերպով է կատարվելու: Ուստի այդ հարցերին մենք բավականաչափ ուշադրություն ենք հատկացնելու:

Անհրաժեշտ է նկատել, վոր մենք դիտավորություն չունենք վորևէ խորհուրդներ ու ցուցմունքներ տալ գրքի վրա աշխատելու տեխնիկայի խնդիրների նկատմամբ, կարդալու տեխնիկայի, նրա մեխանիզմի իմաստով. նմանապես մենք ընդունում ենք, վոր մեր ուսանողների կազմը այնքան վորակյալ է, վոր ուղղագրության, կետադրության, համաձայնության (սինտակսիս) և վոճաբանության խնդիրներում վոչ մի ցուցմունքների կարիք չունի. ուստի ստուգողական աշխատանքներն ստուգելիս, այդ թերությունների ուղղումը չպիտի լինի դասատուների պարտականությունը, վորովհետև մի քանի դեպքերում դա շատ կբարդացներ նրանց աշխատանքը: Ուստի, գրքի վրա աշխատելու հարցերի կոմպլեքսից մենք ինչպես կանգ



կառնենք յերկուսի վրա՝ գրքի վրա աշխատելու տեխնիկական ունակությունն և կարդացածի յուրացնելն ու հասկանալը:

Գիրք կարդալու բնույթը մեծ չափով կախված է այն նպատակից, վոր մենք մեր առաջն ենք դնում: Յերբեմն մեզ անհրաժեշտ է միայն ծանոթանալ գրքի հետ նրա մասին ընդհանուր պատկերացում ունենալու համար, այդ դեպքում կարելի է սահմանափակվել թերթե աչքի անցնելով, գիրքը թերթելով, կարդալով նրա առանձին տեղերը: Ուրիշ դեպքերում անհրաժեշտ է լինում կարդալ գրքից ամենակարևոր տեղերը կամ մեզ հետաքրքրող առանձին հարցերի արձանագրություններ. այդպիսի դեպքերում, յերբ նախապես չեն ցույց տալիս եջերը և այլն, ինչ վոր հարկավոր է, վորոնվում է գրքի ցանկում և ապա արդեն համապատասխան գլուխներ աչքի անցնելով, կարդացվում է այն, ինչ վոր մեզ անհրաժեշտ է, ինչ վոր ներկա դեպքում մեզ հետաքրքրում է: Շատ անգամ անհրաժեշտ է լինում հավասար ուշադրությամբ, առանց վորևէ բան բաց թողնելու ամբողջ գիրքը կարդալ: Վերջապես գիրքը կարելի է կարդալ մշակումով: Յերբ մենք խոսում ենք ուսուցման նյութի ընթերցանության մասին, մենք աչքի առաջ ունենք հենց նրա մշակումը: Այդպիսի մեթոդը յերբեմն անվանվում է նույնպես ընթերցանության ակտիվ մեթոդ, կամ, ինչպես յերբեմն անվանում են նաև գրքի քննական ընթերցանություն: Դա յենթադրում է այնքան լուրջ և ուշադիր վերաբերմունք դեպի գրքի բովանդակությունը, վոր պահանջում է վոչ միայն կարդացածը յուրացնել ու հասկանալ, այլ և քննության յենթարկել: Անհրաժեշտ է քննական անալիզի յենթարկել հեղինակի յեզրակացությունների ճշտությունը և նրա մտքերի հիմնավորումը: Այդպիսի մոտեցումը միևնույն ժամանակ անպայման նպաստում է կարդացածի լավագույն ըմբռնման և մտքում պահելուն:

Գրքին քննադատորեն վերաբերվելու համար անհրաժեշտ է կարդացածը հասկանալ: Դա նշանակում է — հասկանալ առանձին խոսքերը, ֆրազներն ու իմանալ գլխավոր մտքերը զատել յերկրորդական լուսաբանող մտքերից:

Գիրքը կարդալիս մեծ դեր է կատարում բառարանը, վորովհետև յերբեմն մի անհասկանալի բառի պատճառով ամբողջ նախադասության միտքն է կորչում:

Բավական չէ գիրքը կարդալ և հասկանալ, պետք է կարդացածը յուրացնել: Դա չի նշանակում միայն մեխանիկորեն մտքում պահել: Յուրացնելը յենթադրում է մեր կողմից ավելի լուրջ և խոր աշխատանք: Հայտնի մեթոդիստ Ռուբակինը հետևյալ կերպով է արտահայտում յուրացնելու պրոցեսը:

„Ինչ է նշանակում յուրացնել գրքի բովանդակությունը: Դա նշանակում է վոչ միայն ընդունել այն իր գլխում, այլև [illegible] [illegible], վոր նա ձուլվի այն բոլորի հետ, ինչ վոր առաջ եր դրված այնտեղ, վորպեսզի [illegible] նոր մտքերը ձուլվեն նախկինների հետ, ամրացնեն կամ հերքեն այն, վոր-

պետքի փաստերն ավելանան փաստերին, գտնեն իրենց տեղը նրանց պահեստում, հենց այն անկյունում, վորտեղ պետք է տեղավորվեն, վորոշ դիրք բռնեն սիստեմում, չմնան նրանից դուրս մենակ և կողմնակի, այլ կցվելով ուրիշներին, նրանց միջոցով կապ հաստատեն, ձուլվեն շատ ուրիշների հետ: Բայց առանձնապես կարևոր է, վոր նա կապվի փաստերի, այլ խոսքով զգացողությունների և կենսական տպավորությունների վորոշ խմբակի հետ:

Իսկական յուրացումը դեռ էլ ավելին է պահանջում: Նա պահանջում է, վոր բոլոր գաղափարները, ամբողջ աշխարհայեցողությունը չմնան առանձնացած վոչ մեր զգացմունքներից, էմոցիաներից, վոչ մեր կամքից: Ամեն մի գաղափար, նույն իսկ ամենաբարձրը կես գին ունի, յեթե նա չի շոշափում մեր զգացմունքների աշխարհը, յեթե նա ուղղակի կամ անուղղակի չի տանում դեպի վորևե գործողություն:"

Այսպիսով, յուրացումը, կարդացածի մշակումը համարվում է գրքի վրա աշխատելու հիմնական խնդիրներից մեկը:

Յուրացման աստիճանն ու խորությունը կախված են ինչպես գրքի շարադրության ձևից, արծարծվող խնդիրների բարդությունից, այնպես և ուսանողի զարգացման աստիճանից:

## Հիշողության տիպեր:

Մեծ դեր է կատարում կարդացածը մտքում պահելու ընդունակությունը, իսկ դա կախումն ունի ուսանողի հիշողության տիպից:

Զանազանում են հիշողության յերեք հիմնական տիպեր՝ տեսողական, լսողական և մոտորային: Վոմանք ընդունում են նաև հիշողության խառն տիպը: Հիշողության տեսողական տիպի դեպքում ուսանողն իր մտքում ամենից լավ է պահում այն, ինչ վոր նրա աչքերի առաջ էր տպավորվել՝ քարտեզի, իլլյուստրացիայի կամ գրքի եջի և էջագրի ձևով: Հիշողության այդ տիպի դեպքում առաջարկվում է ընդգծել և գծել մատիտով, մանավանդ գունավոր մատիտով գրքի կարևոր տեղերը, և նմանապես համապատասխան դեպքերում, որինակ, տնտեսական աշխարհագրությունն ուսումնասիրելիս, օգտվել դիագրամներից, քարտեզներից և այլ պարզ ձեռնարկներից:

Այն ուսանողը, վորի հիշողության լսողական տիպն է գերազանցում, ամենից լավ է յուրացնում և մտքում պահում այն, ինչ վոր լսում է: Այդպիսի դեպքերում վոմանք դիմում են բարձրաձայն ընթերցանության: Սակայն անհրաժեշտ է նկատի առնել և այն, վոր աշխատելու նման մեթոդի դեպքում մարդ ավելի արագ է հոգնում, նաև շրջապատն էլ չի թույլ տալիս միշտ դիմել աշխատելու այդպիսի մեթոդին: Ուստի հարկավոր է աստիճանաբար այդպիսի մեթոդից ազատվել:

Հիշողության մոտորային տիպն ավելի լավ է մտքում պահում այն, ինչ վոր ինքն ուսանողն է գրի անցրել: Ճիշտ է, այստեղ կան նաև տեսողական կամ լսողական հիշողության տարրեր: Համենայն դեպս այստեղ գրքի վրա աշխատելիս շատ նպատակահարմար է օգտվել զանազան տեսակ գրանցումներից:



Հիշողության խառն տիպը ներկայացնում է վերոհիշյալ հիմնական տիպերի կոմբինացիան, յերբ այս կամ այն տիպը խիստ գերիշխող չէ: Այս դեպքում աշխատելու մեթոդները նույնպես զուգորդված են, վոր գործնականում շատ հաճախ է կիրառվում:

## Յուրացման բանավոր յեղանակները:

Բացի զանազան գրանցումներից, վորոնք գիրքը մշակելիս գործ են ածվում գրքի լավագույն յուրացման համար, վորի մասին մենք ներքևում կխոսենք, գոյություն ունեն նաև յուրացման բանավոր ձևեր: Այստեղ կհիշենք գիրքը թեթևակի աչքի անցնելը, գրքից քաղվածներ անելը և կրկնակի ընթերցանությունը:

Գիրքը թեթևակի աչքի անցնելը նպաստում է կարդացածը հիշողության մեջ վերականգնելուն, յեթե գիրքը մշակվում էր, թեև հիմնավոր կերպով, բայց համեմատաբար վաղուց: Այդպիսի դեպքերում գիրքը դանդաղ թերթելը, մանավանդ յեթե նրա մեջ արված են զանազան նշաններ, նպաստում է առաջուց կարդացածը հիշողության մեջ վերականգնելուն:

Գրքից քաղվածներ անելով ընթերցանությունը կիրառվում է, յերբ կարդացածի մասին մտածելիս և այն հիշողության մեջ վերականգնելիս, մի քանի հարցեր դեռ բավականաչափ պարզորոշ չեն: Քաղվածներով կրկնակի ընթերցանությունը կիրառվում է նաև այն դեպքերում, յերբ ցանկանում ենք հիշողության մեջ ամրապնդել կարդացածի ամենակարևոր հիմնական հարցերը — վորոշումները, յեզրակացությունները և այլն:

Վերջապես, կարելի յե գործածել ամբողջական կրկնակի ընթերցանություն: Դրան դիմում ենք այն դեպքերում, յերբ գրքի առաջին ընթերցանությունը շատ վաղուց է տեղի ունեցել կամ կարդացել ենք առանց մշակելու, այսինքն առանց վորևե լրացուցիչ ձևերի, վորոնք նպաստում են գրքի լավագույն յուրացմանը: Պետք է նկատել, վոր կրկնակի ընթերցանության դեպքում թեև տվյալ մոմենտին ստացվում է դրական էֆեկտ, սակայն մի քանի ժամանակ անցնելուց հետո, յեթե պահանջվի, որինակ, կարդացածի մասին պարզորոշ գաղափար ունենալ, անհրաժեշտ կլիներ գիրքը նորից կարդալ: Ուստի, այդ չէ հանձնարարվում իբրև աշխատանքի մեթոդ և վոչ մի դեպքում:

## Գրանցումների տեսակները գրքի վրա աշխատելիս:

Գիրքը յուրացնելու վերոհիշյալ յեղանակները կարելի յե նկատի առնել միայն իբրև օժանդակ և վոչ հիմնական յեղանակներ: Կարդացածը լավ յուրացնելու և մտքում պահելու համար անհրաժեշտ է դիմել զանազան տեսակ գրանցումների: Գրանցումը գրքի մշակման ժամանակ կարգապա-

հության է սովորեցնում ուսանողին, հարկադրում է նրան ավելի ուշադիր լինել կարդացածին և բնականաբար ուշադրություն դարձնել կարդացածի մեջ պարունակած մտքերի այնպիսի նրբություններին, վորոնք հասարակ ընթերցանության ժամանակ անպայման կվրիպեյին նրա ուշադրությունից: Բացի դրանից, մշակման այդպիսի յեղանակը հեշտացնում է կրկնությունը, վերականգնում է հիշողության մեջ կարդացածը, ինչպես ամբողջովին, այնպես էլ նրա առանձին հարցերը, վոր անհրաժեշտ է լինում մի վորևէ աշխատանք կամ զեկուցում գրելիս, նմանապես և ստուգողական աշխատանք կատարելու դեպքում:

Գիտական աշխատավորների և մտածողների պրակտիկան շողափելիորեն հաստատում է գրանցումներից օգտվելու անհրաժեշտությունը գիրք մշակելիս:

Գերմանական պրոֆեսոր Նյունյեն այդ առիթով ասում է.

„Մենք շատ ենք կարդում, շատ աշխատությունների հետ ենք ծանոթանում, շատ ենք յուրացնում: Բայց յերբ կարիք է զգացվում գրել վորևէ հարցի մասին, թեկուզ մի փոքրիկ հոդված, և հարկ է լինում հենվել մի վորևէ գրվածքի վրա (մենք արդեն չենք խոսում ցիտատի մասին), սկսվում են յերկար և բարակ վորոնումներ. շատ անգամ մոռանում ես վոչ միայն մտքի ճիշտ բովանդակությունը, այլ և չես կարողանում հիշել, վորտեղ ես պատահել այն: Ցավ ամեն մի առանձին աշխատանք նորից ես սկսում. իսկ նախընթաց ծանոթությունը նույն գրականության հետ, կոնկրետ նշումներ չունենալով, կորչում է գիտական աշխատանքի համար գրեթե առանց հետքի: Ճիշտ է, յերբեմն վոր և մեկն ընթերցանության ժամանակ իր դիտողություններն է անում, յերբեմն նույնիսկ քաղվածքներ, բայց միայն այն ժամանակ, յերբ դա հարկավոր է լինում, իսկ յերբ չկան այդ դիտողությունները, կորան և բոլոր քաղվածքները:"

Այլ հարց է, վոր գրանցումներից, նրանց վոր չեն էլ վոր մենք ընտրեցինք, հարկավոր է օգտվել չափավոր զգուշությամբ և հմտությամբ: Նկատվում է, վոր ուսանողներից վոմանք գրավվում են այնպիսի գրանցումներով, վորոնք վոչ մի օգուտ չեն բերում: Հարկ է գրի առնել ամենաէականը, այլապես այս աշխատանքի ամբողջ ծեքը կորչում է: Նշվում են գրանցումների հետևյալ ձևերը — ընդգծումներ, ցիտատ, պլան, քաղվածք, թեզիս, կոնսպեկտ և աշխատանքային առաջնյալներ:

Ընդգծում նշանակում է ուղղահայաց գծով նշել գրքի այն համապատասխան հատվածը կամ առանձին ֆրազը, վորն անհրաժեշտ է լավ պահել միտքում: Ավելի շողափելի դարձնելու համար, յեթե ֆրազը մեծ չէ, համապատասխան տողերն ընդգծում ենք հորիզոնական գծով: Յերբեմն այդ նպատակով գունավոր մատիտ են գործածում: Ընդգծումը գրանցման ամենապարզ ձևն է, բայց միև նույն ժամանակ մեծ չափով նպաստում է լավագույն յուրացման, հարկադրելով ավելի մտածված կերպով կարդալ գիրքը, նմանապես մեծ չափով բերելավում է կարդացածի կրկնությունը:

Գրանցման այդ ձևի պակասությունն այն է, վոր նա փչացնում է գիրքը.



հետևապես ընդգծումներ կարելի յե անել միայն սեփական գրքի վրա: Բացի այդ շատ դեպքերում այդ ձևն անբավարար է հանդիսանում:

Ցիտատ նշանակում է բառացի մեջբերում գրքից մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ: Ցիտատներին պետք է դիմել ավելի և հմտորեն, քան ընդգծմանը, վորովհետև այս աշխատանքն ինքն ըստ ինքյան շատ ժամանակ է պահանջում: Ցիտատներին կարելի յե դիմել միայն կլասիկ գրվածքներ մշակելիս, այն էլ պետք է ամենաէական մտքերն արտագրել: Գրանցումների այդ ձևը սովորաբար փորրական չէ, այլ նրանից օգտվում են այնպիսի անձինք, վորոնք գրքի վրա աշխատելու վորոշ փորձառություն ունեն արդեն գրանցումների իմաստով:

Ամենից լավն է ցիտատներ անել քարտիկների վրա, հարկավոր դեպքում այդ քարտիկները կարելի յե դասավորել վոչ միայն ըստ հեղինակների, այլ և ըստ հարցերի, վոր շատ կարևոր է: Քարտիկների վրա ցիտատներ արտագրելիս անպայման հարկավոր է ցույց տալ հեղինակը, գրվածքը և եջը: Կարելի յե նաև նշել, ինչ հարցի վերաբերմամբ է: Ցիտատները, ինչպես աշխատանքի օժանդակից նյութ, շատ համառոտ պետք է լինեն:

Յեթե ցիտատը շատ յերկար է լինում, այդ դեպքում արձանագրում ենք կարճ մեր խոսքերով: Գրանցման այդպիսի ձևն անվանվում է քաղվածք: Այստեղ նույնպես անհրաժեշտ է հիշել աղբյուրը, բայց հիշատակելով, վոր դա գրի յե առնված վոչ բառացի: Կարդացածի մասին իր մտքերի գրանցումները կարելի յե անել գրքի լուսանցքներում կամ առանձին փերթակում:

Կարդացածի պլանը կարդացած բնագրի հիմնական հարցերի հասարակ ամփոփումն է: Նա չէ նպաստում յուրացման, այլ գիտելիքները վորոշ սիստեմի է բերում: Այդպիսի պլան, ընդարձակ ձևով կազմելու յենք ուսուցման ձեռնարկներին համապատասխան դասընթացների ծրագրերի ձևով: Պլան կազմելն առանձին նշանակություն ունի „միանգամյա" ասացվածքության համար, որինակ, վորևէ նյութի հարուկ մշակում զեկուցման համար և այլն:

Ընդարձակ պլանը, յերբ արդեն վոչ միայն վերնագրերն են տրվում, այլև հիմնական վորոշումները, ձևակերպումները, թեկուզ հարցերի վերաբերյալ իրար հետ տրամաբանորեն կապակցված ձևով, դառնում է թեզիս:

Թեզիսները կարող են լինել պարզ, յերբ վոչ մի ապացույց չեն պարունակում, այլ տրվում են միայն իբրև ձևակերպություններ, ձևակերպումներ, դրական կամ բացասական ձևով, և բարդ — յերբ համապատասխան ապացույցները հիմնավորվում են

Թեզիսները մեծ չափով են նպաստում նյութի յուրացմանը և վորոշ սիստեմի կապ են դնում մտքերն ու գիտելիքները:

Թեզիսների փոխարեն կազմում են կարդացածի կոնսպեկտը: Դա կարդացածի իր խոսքերով սահուն վերապատմելն է (գրանցումը):

[illegible]

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀԽՍՀ-ССР
1000 399/5 4074

կոնսպեկտը գրանցման բավական տարածված ձևն է ուսանողների մեջ: Պետք է միայն ամեն կերպ աշխատել, վոր նա շատ համառոտ լինի: Դրա համար անհրաժեշտ է կարդացածից վերցնել միայն ամենաէականն ու սեփական խոսքերով համառոտ և պարզ շարադրել:

Վորովհետև հիմնական մտքերը յերբեմն հոդվածի կամ դասախոսության վոչ թե սկզբում, այլ վերջում են շարադրված լինում, ուստի ամենից լավն այն է, վոր կոնսպեկտը կազմվի ամբողջ դասախոսությունը կարդալուց հետո, օգտվելով միևնույն ժամանակ գրքից կրկնակի, իսկ յեթե կան նախորոք կատարված նշաններ, քաղվածքային ընթերցանության ձևով:

Գործ է ածվում յերբեմն նաև գրանցման մի այլ ձև՝ այսպես կոչված աշխատանքային գրանցում: Դա պլանի և գրանցումների կոմբինացիան է: Ուստի ավելի հարմար է տեղավորել այն յերկու սյունյակում՝ ձախ կողմից պլանը, իսկ աջից պլանի առանձին հարցերի վերաբերյալ բացատրությունները:

Ամեն մի ուսանող, գրքի վրա աշխատելիս, կարող է ընտրել գրանցումների վորևե ձևը, նայած իր պատրաստության չափն յեղած ժամանակին, իր հակումներին և աշխատանքի և ունակությանը: Մենք կարող ենք միայն վճռական խորհուրդ տալ, վոր մանավանդ ուսուցման հեռակա մեթոդի դեպքում գրանցումները լինեն հեռակայի աշխատանքի անբաժան մասը:

Հեռակայն ուսումնասիրած առարկան հաճախակի բանավոր կերպով կրկնելու հնարավորությունից զրկված է սեմինարիայում և ընկերների շրջանում, վորից օգտվում են ստացիոնար դպրոցների ուսանողները, թեպետ և նրանց համար էլ գրանցումները պահպանում են իրենց նշանակությունը: Իսկ հեռակայի համար նրանք էլ առավել անհրաժեշտ են:

## Հեռակայի աշխատանքի կազմակերպությունը:

### Հեռակայի պարապմունքների պլանավորումը:

Ստացիոնար դպրոցն իր աշխատանքի ամբողջ սիստեմով է կազմակերպում ուսանողի աշխատանքը: Պարապմունքների ցուցակը, նյութի դասավորումն ըստ ժամանակի, ամեն որվա աշխատանքի տեմպը և այլն — այդ բոլորը նրան տրվում է: Այդ է ստացիոնար դպրոցների արժանիքը, սակայն և այդ է նրանց թերությունը, քանի վոր այդ սիստեմը պարտավորեցնում է բոլոր ուսանողներին աշխատել միևնույն տեմպով, առաջ ընթանալ իրար հետ միասին: Այն ինչ, յեթե մարդիկ, բացի ուսումից, զբաղված են ուրիշ աշխատանքով էլ, այդ բանը շատ անգամ անհնարին է լինում:

Հեռակայի ուսուցումն անհամեմատ ավելի ճկուն է, հարմարվում է հեռակայի, նրա հնարավորություններին: Սակայն միաժամանակ նա պահանջում



հեռակայից ինքնակազմակերպվածություն և ինքնակարգապահություն: Նա ինքը պետք է կազմի իր պարապմունքների ցուցակը, աշխատանքի պլանը, սահմանի մշակման նորմերն ու անցնելու տեմպերը՝ ինստիտուտի կողմից է վորոշված ժամկետների սահմաններում:

Նախ և առաջ անհրաժեշտ է աշխատանքի պլան: Առանց պլանի դժվար է վորևե աշխատանք կազմակերպել: Պլանը — աշխատանքի բաշխումն է ըստ ժամանակի: Հեռակայն աշխատանքի պլանը կազմելու համար պետք է իմանա աշխատանքի ծավալը: Այդ խնդիրներին վերաբերյալ հիմնական տեղեկությունները տալիս են ուսուցման պլանն ու պրոսպեկտի այլ տեղեկությունները: Այդ նյութերի հիման վրա կարելի յե կազմել պարապմունքների ընդհանուր ցուցակ, այն է՝ վորոշել պարապմունքների որերն ու ժամերը հնգօրյակում, օրինակ — վեց, յոթ կամ ութ որ, 2-3 ժամ որական: Այս դեպքում ցանկալի յե պարզ վորոշել, վոր որերն են ընտրվում, իբրև ուսուցման որեր: Այնուհետև, ուսուցման նյութերն ստանալով, յուրաքանչյուր հեռակա կազմում է մշակման կոնկրետ պլան, ցույց տալով, վոր որը և ինչ առարկայից է ուսանողը մտադիր պարապել և վորքան է աշխատելու ամեն մի որ: Յուրաքանչյուր առարկայի մշակման նորմեր սահմանելը կատարվում է փորձնական ճանապարհով:

Աշխատելով մի քանի ժամ չորս — հինգ որվա ընթացքում, հեռակայն կարող է վորոշել միջին նորմը, բաժանելով մշակած եջերի քանակը մշակման վրա գործադրած ժամերի քանակի վրա: Շատ հավանական է, վոր զանազան առարկաներից կլինեն մշակման զանազան նորմեր, օրինակ, քաղաքատնտեսությունից յերեք—չորս եջ մի ժամում, ֆինանսական գիտությունից հինգ—վեց եջ մի ժամում և այլն:

Ստանալով նյութերն, ուսանողը վորոշված նորմերի և ստացված նյութի քանակի համապատասխան կազմում է նյութի մշակման պլանը, հաշվի առնելով ամբողջ ամիսը, քանի վոր նյութերն ամեն ամիս են ուղարկվելու: Մշակման պլան կազմելիս, անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն ժամանակը, վոր կպահանջվի ստուգողական աշխատանք գրելու համար, յեթե այդ աշխատանքը տրվում է տվյալ նյութերում:

Այսպես մոտենալով աշխատանքի կազմակերպմանը և խիստ հետևելով մշակված պլանին, կարելի յե զգալի չափով խուսափել անմշակ նյութի կուտակումից, վոր հետագայում տապալում է հեռակայի աշխատանքը և դպրոցի կազմից դուրս գալու պատճառ հանդիսանում:

### Աշխատանքի տեղը:

Հեռակայի աշխատանքի կարևոր մոմենտներից մեկն է և այն շրջապատը,

վորտեղ նա պիտի աշխատի: Այստեղ նախ և առաջ ամենամեծ նշանակություն ունի աշխատելու տեղը: Անհրաժեշտ է ձգտել պարապելու գրադարաններում, ընթերցարաններում, կաբինետներում, վորտեղ ինքը շրջապատը ստեղծում է աշխատելու ավելի գործնական մթնոլորտ և հնարավորություն կը տալիս պարապմունքների ժամանակ չը քաշվելու կողմնակի ուրիշ խնդիրներով: Նման շրջապատն արտաքուստ ինքն իրեն կազմակերպում է ուսանողի աշխատանքն և տալիս է նրան վորոշ սիստեմատիկականություն: Մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, վոր այդպիսի տեղերում կան համապատասխան սարքավորում, լուսավորություն և յերբեմն նաև ուսուցման մի քանի լրացուցիչ ձեռնարկներ:

ընթերցարաններում, կաբինետներում և այլն պարապելը կարող է սկզբում դժվար և անհարմար թվալ և ուսանողին կարող է „գրավել" ընտանի շրջապատը: Անպայման այդ աշխատանքին անհրաժեշտ է հարմարվել հենց սկզբից, բայց դրա փոխարեն աշխատանքի արտադրողականությունը հետագայում շատ ավելի բարձր կը լինի, քան ընտանի շրջապատում, վորտեղ ուսանողին ամեն րոպե կարող են գրավել կողմնակի մանր հանգամանքներ, վորոնք առաջին մոմենտին աննկատելի յեն, սակայն խիստ կերպով ազդում են ուշադրության վրա, ցրվում պարապողի ուշադրությունը, վորն իր հերթին առաջ է բերում հոգնածություն, իջեցնում աշխատունակությունը և պարապմունքների աշխուժությունը:

Սակայն շատ անգամ հնարավոր չէ լինում պարապել գրադարաններում, ընթերցարաններում և այլն, թեկուզ այն պարզ պատճառով, վոր չկան այդպիսիները: Այն ժամանակ անհրաժեշտ է տանը ստեղծել համապատասխան շրջապատ:

Աշխատանքի համար շատ մեծ նշանակություն ունի հանգիստ շրջապատը, վոր պետք է վոչ մի բան չխանգարի ուսանողին: Այնուհետև անհրաժեշտ է համապատասխան կահկարասի — սեղան և աթոռ, լուսավորություն և հարկավոր չափով տաք լինի սենյակը: Անպայման պետք է պարապել սեղանի վրա և վոչ պառկած, վոտքի վրա և այլն: Բացի այդ, անհրաժեշտ է, վոր կահավորանքը ուսանողի հասակին հարմար լինի: Այդ առաջին հայացքից մանր հանգամանքները կարող են շատ զգալի կերպով անդրադառնալ ուսանողի աշխատանքի վրա:

Այսպես ուրեմն աշխատանքի նպատակահարմար դասավորումն ըստ ժամանակի, այսինքն, աշխատանքի պլանավորումն և աշխատանքի տեղի պատշաճավոր կազմակերպություն — ահա հեռակայի աշխատանքի յերկու առաջին հիմնական պայմանները:

## Ընթերցանության առողջապահությունը:

Ամեն մի աշխատանք պահանջում է աշխատանքի վորոշ առողջապահական պայմաններ: Այդ պայմանները յերկու կարգի կարելի յէ բաժանել.



առաջին — աշխատանքի արտաքին պայմանները՝ աշխատանքի տեղի կազմակերպությունը, սենյակի մաքրությունը, լուսավորությունն և այլն, և յերկրորդ՝ աշխատող որգանիզմի հատկությունները:

Յուրաքանչյուր որգանիզմի աշխատանք պահանջում է վորոշ էներգիայի սպառում, վոր պետք է լրացվի կանոնավոր յեղանակներով: Որգանիզմի աշխատունակության հիմքը էներգիայի կուտակման և ծախսման կանոնավոր փոխհարաբերությունն է: Այդ հավասարակշռության խախտումն աշխատունակության կորուստ է պատճառում այս կամ այն չափով:

Սնունդն այն հիմնական ֆակտորն է, վոր որգանիզմի ուժերն է պահպանում ու վերականգնում: Մասնագետների ասելով մարդ որական իր որգանիզմի մեջ պետք է վոչ պակաս քան 2400 կալորի ընդունի: Սնունդը պետք է ընդունել վորոշյալ ժամանակներում, որական յերեք — չորս անգամ, մի անգամից վոչ շատ քանակով:

Որգանիզմի աշխատունակությունը պահպանելու ու նրա ուժերը վերականգնելու յերկրորդ պայմանն է հանգստությունը:

Մտավոր աշխատանքը պահանջում է ուղեղի վանդակների նյութի ուժեղ սպառում: Բացի այդ, մտավոր աշխատանքի պրոցեսում որգանիզմի մեջ հատուկ նյութեր են առաջանում, վորոնք բացասական կերպով են ազդում նեարդային հյուսվածքի վրա: Այդ պատճառներով առաջ է գալիս աշխատունակության նվազում — հոգնածություն:

Որգանիզմի հոգնածության դեմ մաքառելու համար անհրաժեշտ է նրա հանգիստը կանոնավոր կերպով կազմակերպել, դրա համար անհրաժեշտ է վորոշ աշխատանքային և կենսական ռեժիմ սահմանել:

Որվա աշխատունակությունը, ժամերով, հետևյալ կերպով է կարգավորվում՝ մարդու աշխատանքի ամենամեծ արտադրողականությունը լինում է (յեթե նա կանոնավոր կյանք է վարում՝ պառկում է քնելու գիշերը ժամը 12-ին և վեր է կենում առավոտը ժամը 7-ին) առավոտյան ժամի 8-ից մինչև ցերեկվա ժամի 1-ը: Այնուհետև աշխատունակությունն իջնում է, հասնելով յերեկոյան ժամի 5-ին իր ցածր աստիճանին: Աշխատունակությունը վերականգնելու համար անհրաժեշտ է հանգիստ, վորը վոչնչացնում է որգանիզմի հոգնածության պրոցեսները:

Հանգիստը կարող է լինել բացարձակ (աբսոլյուտ) և հարաբերական: Բացարձակ հանգիստը, դա քունն է, վոր լիովին վերականգնում է որգանիզմի աշխատելու ընդունակությունը:

Հարաբերական հանգստի դեպքում ուսանողն ընդհատում է աշխատանքն ու պարապում մի այնպիսի բանով, վորը մտքի առանձին լարումն չի պահանջում:

Այսպես, ամեն մի յերկու ժամվա աշխատանքից հետո 10-15 րոպե ընդհատում անելով, կարելի յե ավելի յերկար ժամանակ աշխատել, պահպանելով հարկավոր աշխատունակությունը:
Առավոտյան 8 ժամից աշխատել սկսող մարդու համար անհրաժեշտ է, բացառապես հանգիստ որինակ յերեկոյան ժամը 5-ից մինչև 7-ը: Յեթե այդ ժամանակ յերկու ժամ քնենք, որգանիզմի աշխատունակությունը գրեթե լրիվին կվերականգնի և ժամը 7-ից մինչև 12 կարելի կլինի բավական ինտենսիվ կերպով աշխատել:
Ինստիտուտի հեռակաների մեծամասնությունը ուսումը կապակցում է գործնական աշխատանքի հետ և իբրև կանոն աշխատող-ուսանողներն են: Ուստի նրանց առաջադրվում է պաշտոնական աշխատանքից հետո լիակատար հանգիստ տալ որգանիզմին, այսինքն քնել, որինակ 2 ժամ, վորից հետո 3-4 ժամ կարելի յե պարապել արդյունավետ կերպով: Կիրակնօրյա որերն ավելի լավ է հանգստյան նվիրել և զբոսնել: Հարկավոր է նույնպես խուսափել գիշերվա պարապմունքներից և առհասարակ հոգնածությունից, նկատի առնելով, վոր հեռակայի ուսումը համառ աշխատանքի յերկար պրոցես է և պահանջում է վոչ թե էներգիայի առանձին բռնկում, այլ սիստեմատիկ աշխատանք յերկար ժամանակի ընթացքում: Գերլարումը կարճ ժամանակի ընթացքում առաջ է բերում աշխատունակության անկում հետագա շրջանում:
Տեսնում ենք, վոր հեռակա ուսուցումը պահանջում է ուսանողից ամեն քայլափոխում ստեղծագործություն և նախաձեռնություն: Նա պահանջում է ուսանողից մաքսիմալ չափով մտքի և կամքի կազմակերպություն: Ուսանողի համար քիչ է այն, ինչ վոր նրան տրվում է պատրաստի նրա աշխատանքի կազմակերպության խնդիրների վերաբերյալ, և նա ինքը պետք է ամեն բան ստեղծի: Բայց այդ դժվարությունների վրայով է անցնում հաղթանակի ուղին՝ դրած նպատակներին հասնելու համար: Այդ ուղղությամբ ամեն մի անցած քայլափոխ խթան է դառնում հետագա պայքարի ցանկություն ցույց տալով, վոր գիտության ուղիներն այնքան դժվար չեն և համենայն դեպս վոչ անհաղթելի:

## Կոնսուլտացիոն բյուրոների աշխատանքի ձևի և կազմակերպման սկզբունքները:

Մանկագիտական կրթության սիստեմի վերակառուցման և դրա հետ կապակցված կադրերի պատրաստման պատասխանատվությունը տնտեսական որգանների վրա դնելու հետևանքներից մեկը յեղավ հեռակա ուսուցման



գործի կարգավորումը:
Մտնելով ընդհանուր սիստեմի մեջ, հեռակա ուսուցումը ստանում է վորոշ վերջ և պարզ կազմակերպչական գծագրություններ:
Այստեղից բնականորեն վորոշվում է հեռակա ուսուցման կառուցվածքը, վորը 1) կառուցվում է ծյուղավորման սկզբունքով, 2) պետք է իր աշխատանքն որգանապես կապի համապատասխան ստացիոնար դպրոցների ու շտապանքի հագրգռված ձեռնարկությունների և հաստատությունների հետ, 3) ստացիոնար ուսուցման մեթոդներն ոգտագործելով, պետք է միայնի աշխատանքի այնպիսի ձևեր, վորոնք կարող են ապահովել ուսուցման առաջադիմությունը, հաշվառքի և ուսուցման վերահսկողության կանոնավոր սիստեմը:
Այդ դրվածքների և միջոցառումների ամբողջությունը հեռակա ուսուցումը դնում է կանոնավոր կազմակերպության լայն ծանապարհի վրա, վորի պայմաններում հնարավոր է կանոնավոր մեթոդական ուսուցում, գիտական բացատրություն և փորձ (էկսպերիմենտ) աշխատանքի գործնագործական ձևավորություն և փորձ
վերի և մեթոդների փոխարեն, վորոնք նկատվում էին մինչև այժմ:
Դրած խնդիրներն իրագնելիս հիմնական դժվարությունը՝ հեռակա դպրոցի կտրված լինելն է իր ուսանողների մասսայից, շահագրգռված ձեռնարկություններից, հաստատություններից և վերջապես ստացիոնար դպրոցներից: Կազմակերպչապես այդ դժվարությունը կարելի յե լուծել, ծավալելով հենման կետեր տեղերում, հեռակա ուսանողների կուտակման և
չգողության կենտրոններում:
Նկատի ունենալով ուսումնական պարապմունքները՝ ԱՖՏՆ ինստիտուտը կոնսուլտացիոն բյուրոներ է կազմակերպում Թիֆլիսում և Քութայիսում:
Կոնսուլտացիոն բյուրոների կազմակերպությունը պահանջում է հեռակա ուսանողների մասսայի ուղղությունը և ամենաչերմ մասնակցությունը:
Առանց այդ պայմանի կդժվարանա կոնսուլտացիոն բյուրոների ծավալումը, իսկ վերջիններիս աշխատանքը չի կարող իրագործվել այն լիակատար չափով և էֆֆեկտով, վորը կարելի յե և պետք է հուսալ:
Ներկա հոդվածը նպատակ ունի ԱՖՏՆ ինստիտուտի ուսանողներին բացատրել բյուրոյի աշխատանքի և կազմակերպման սկզբունքները, բացատրել բազմավոր ուսուցման կոնսուլտացիայի, իբրև տեղերում ուսանողների ուսումնա-մեթոդական սպասարկման հիմնական ձևերից մեկի մեթոդական նշանակությունն ու բնույթը:
ԱՖՏՆ ինստիտուտի կոնսուլտացիոն բյուրոների աշխատանքը ծավալվում է յերկու ուղղությամբ՝ կազմակերպչական և ուսումնական:
1) Հեռակա ուսուցման գաղափարը տարածելով տեղերում, կոնսուլտացիոն բյուրոները հոգում են ԱՖՏՆ ինստիտուտի ուսանողների կոմպլեկտավոր-

բումը կազմակերպված ճանապարհով, կապվելով այդ նպատակով համապատասխան ղեկավարված հաստատությունների և ձեռնարկությունների հետ: Վերջիններս պետք է առավելագույն չափով ներգրավված լինեն հեռակա ուսուցման գործի մեջ:

Տնտեսական օրգանները հնարավորություն ունենալով իրենց մասնակցությունն ապահովելու Կ. Բյուրոյի միջոցով ինչպես համապատասխան մասնագետներ, այնպես էլ արտադրական ուսուցում, պրակտիկա կազմակերպելու գործում, որտեղ խիստ են սպասում օգտագործելու հեռակա սիստեմ, իբրև իրենց ապարատը նախապատրաստելու ու նրա որակը բարձրացնելու հիմնական ձև:

Շատ բնական է, որ միայն ուսուցման կազմակերպությանը մասնակցելու գործնական հողի վրա կարող են հաշվի առնվել տեղերի գործնական պահանջներն ուսուցման պլանի, արտադրա-բազդրական ուսուցման բնույթի մասին, մյուս կողմից — ապահովված լինել հեռակայողների ուսուցման նորմալ աշխատանքը, արտադրական պրակտիկայի կանոնավոր կազմակերպությունն ու կիրառումը:

Հեռակա ուսանողի աշխատանքի նկատմամբ հիմնական կարիքը նրա չափազանց ծանրաբեռնված լինելն է պաշտոնական և հասարակական աշխատանքով: Ընդհանուր շրջաբերականներ և հրահանգներ հրապարակելով այդ կարիքը չի վերանում: Մինչև որ կուս- և պրոֆ կազմակերպությունների ձեռնարկությունների ու հաստատությունների հեռակաների իրենց աշխատավորների կամ իրենց համար պատրաստվող կադրերի ուսմամբ անչափ կհամոզվեն, կզգան այդ կարիքի ուժը, հեռակայի ուսուցման աշխատանքի և նրա ղեկերի անտես առնելը կմնա հաճախակի երևույթ:

Այդ ուսումը կհամարվի հեռակայի անձնական գործը, «հասարակական ուղղվածությունն ու ազատությունը հեռակայի» կմնան բառ ուժից ու նշանակությունից զուրկ կուր ձևականություն:

Պակաս սուր կերպով չէ դրված խնդիրն և արտադրական ուսուցման վերաբերմամբ: Շատ ծրագրային բնույթ ունեցող դժվարությունից, առանց տեղերի մասնակցության արտադրական պրակտիկայի կազմակերպված ձևով կիրառումը հանդիպում է անհաղթելի խոչընդոտների, քանի որ արտադրական ուսուցման գործը միապաղաղ ամբողջություն չէ կազմում. այնպես որ անհրաժեշտություն է զգացվում հաշվի առնել տեղերի ղեկերն ու հնարավորությունները և աշխատանքը կառուցել համաձայն տեղական պայմանների:

Վերոհիշյալ բոլոր խնդիրներն ապահովելու համար Կոնս. Բյուրոյին



կից հաստատվում են նախագահություններ, որոնց կազմի մեջ են մտնում ֆժն. Դեպբանկի, ծող. կնտ. Բարձ. խոր., կոոպերացիայի տեղական օրգանների ներկայացուցիչները:

Նպատակ ունենալով օգնել հեռակա-ուսանողներին և մոտենալ նրանց ուսումնա-մեթոդական ղեկավարությունը տեղերում, կոնսուլտացիոն բյուրոներն իրենց աշխատանքի ընթացքում հենվում են համապատասխան տեղական դպրոցների վրա, օգտագործելով դասատու ուժերի ու պրակտիկ-աշխատավորների փորձառությունը: Դրա համապատասխան կազմակերպվում է կոնսուլտացիոն բյուրոների և կետերի ընտրությունը: Այդ մոմենտը չափազանց կարևոր նշանակություն ունի, քանի որ ուսուցման բազայի գոյության դեպքում միայն հնարավոր է իրագործել ուսումնական կոնսուլտացիա, հաշվանկյումն, արտադրական պրակտիկա և այլն:

Կոնսուլտացիոն բյուրոները պետք է իրենց կազմակերպչական աշխատանքի մեջ գրավեն ամենաակտիվ հեռակա-ուսանողներին, որովհետև վերջիններիս ակտիվ մասնակցությունից անկախ բյուրոյի ամբողջ կազմակերպչական աշխատանքը — հեռակա ուսուցման պրոպագանդը, հեռակաների ամբողջ մասսայի ներգրավումը բյուրոների գործունեության շրջանի մեջ, ոչ բավականաչափ ակտիվ և ցածր մնացող ուսանողների ակտիվացումը, արտադրական պրակտիկայի կազմակերպումը — չեն կարող լիակատար կերպով իրացվել և բավարար չափով կիրառվել: Այդ աշխատանքը չի կարող կատարվել ապարատի միջոցով, մանավանդ որ այդ ապարատը փոքր է և կազմակերպչական աշխատանքով չափազանց ծանրաբեռնվելու դեպքում, անպայման կտուժի բյուրոների ուսուցման կյանքը:

Ուսումնական կոնսուլտացիոն աշխատանքը վարվում է առանձին կանոնադրությամբ, որի համաձայն կոնսուլտացիոն բյուրոները հետևյալ աշխատանքն են տանում:

1.) Օգնություն են ցույց տալիս հեռականերին նրանց ուսման աշխատանքի ընթացքում այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որոնք ծագում են ուսման նյութի մշակման պրոցեսում ուսման պլանի սահմաններում:

2) Խորհուրդներ և ցուցմունքներ են տալիս հեռականերին, երբ վերջիններս ստուգողական աշխատանք են կատարում, բացատրելով գրելու սկզբունքները, նրա ծավալը, նաև ռեֆերատի նյութի օգտագործման ձևերն ու բնույթը:

3) Կազմակերպում են հեռակաների ստուգողական աշխատանքների քննադատություն ժյուրիի կամ նրա բաժանմունքների կողմից ցույց տված դիսցիպլիններից, այլև նման ձևով ստուգողական աշխատանքների փոխարեն համաձայն. հատուկ ցուցմունքների անց են կացնում բանավոր հար-

վերլուծություններ:
4) Կազմակերպում են արտադրական պրակտիկա, ղեկավարում են հեռակաների աշխատանքը պրակտիկայում, յեզրակացություն են տալիս անցկացրած պրակտիկայի հաշվետվության մասին և ընդհանուր հաշիվ են կազմում հեռակաների իրենց ռայոններում կատարած պրակտիկայի մասին:
5) Կազմակերպում են հեռականերից խմբակներ ուսման նյութը մշակելու համար, ղեկավարում են նրանց աշխատանքը և խմբակների աշխատանքի հաշվառքն են վարում:
6) Կազմակերպում են առանձին դիսցիպլինների վերաբերյալ սեմինարիաներ սիստեմատիկաբար խորհուրդներ և ցուցմունքներ տվող հեռակաների համար և պատրաստում են ու անց են կացնում քննական նախաշրջաններ:
7) Կազմակերպում են ու ղեկավարում կոնսուլտացիոն կետերի աշխատանքն իրենց ռայոնների սահմաններում:
8) Ակտիվացնում են բյուրոների հաշվառքում գտնվող հեռակաների աշխատանքը, ուսումնա-մեթոդական օգնություն մատուցանելով հետամնաց կամ վոչ բավականաչափ ակտիվ ուսանողներին՝ խմբակներ կազմակերպելու կամ անհատական պարապմունքի միջոցով. վերջապես դիմում են համապատասխան հասարակական և կուսակցական կազմակերպություններին, նաև հաստատություններին և ձեռնարկություններին հեռակաների աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին:
9) Անց են կացնում իրենց ռայոնների հեռակաների կոնֆերենցիաներ կազմակերպչական ուսումնա-մեթոդական հարցերի վերաբերմամբ:
10) Վարում են ուսանողների աշխատանքի վորակային և քանակային հաշվառքը, նյութ պատրաստելով [illegible] ավարտող հեռականերին ոգտագործելու համար:
Բոլորովին ակներև է, վոր կոնսուլտացիոն բյուրոները միանգամից չեն կարող հեռակաների ուսումնա-մեթոդական սպասարկման բոլոր ձևերն իրագործել:
Բյուրոների աշխատանքը ծավալվում է վորոշ հետևողականությամբ. այնպես, վոր ուսուցման սպասարկման առանձին տարրերը համաձայնեցրած լինեն իրար հետ, մեկը մյուսից բխեն դառնալով մի ամբողջական, մեթոդապես մշակված և կառուցվածքի տեսակետից հաստատուն սիստեմ: Այդ սպասարկման ամենատարածված ձևն է բանավոր ուսումնական կոնսուլտացիան: Յուրաքանչյուր ուսուցման հիմնական մեթոդական սկզբունքն է, վոր ուսուցման նյութի յուրացմանը պետք է նախորդի նրա պարզորոշ ու կանոնավոր ըմբռնումը: Հեղինակի առանձին մտքերի ու դրույթների ճիշտ չհասկանալն ու լավ չըմբռնելը այն հետևանքն



են ունենում, վոր ուսանողը սխալ է յուրացնում գիտական դիսցիպլինը, դրա հետևանքով նրա գիտելիքների ընդհանուր սիստեմի մեջ մտնում են սխալներ, վորոնք խեղաթյուրում են այդ դիսցիպլինի գիտական արժեքը և ազդում են գիտության մեթոդոլոգիայի վրա: Քանի վոր այդ պակասությունները ունեն վոչ փոքրական, այլ վորոշ նշանակություն, ուստի և նրանց ուղղելը կապված բարդ, դժվարին բնույթ է կրում, դանդաղեցնելով ուսումնական պլանի նորմալ ընթացքը հեռակայի կողմից: Ուստի անհրաժեշտ է սկզբից և յեթ այնպիսի ուղղություն տալ ուսանողին, վոր նա լավ հասկանա կարդացածը, հարկավոր է մեթոդապես կանխել նրա աշխատանքի անկանոնությունները: Նախապատրաստական աշխատանքն շատ կարևոր նշանակություն է ստանում: Այստեղ ուսանողն ինքն իրեն է հանձնված. չկա դասատու, վոր ստուգի ուսանողի գիտելիքները և թե վորչափ կանոնավոր է նա հասկացել նյութը և կարողանա կանխել լինելիք սխալները: Բանավոր ուսումնական կոնսուլտացիան նպատակ ունի կանխելու սխալ հասկացողությունը, նպաստելով դրանով հեռակաների նորմալ ուսուցմանը: Քանի վոր ուսումնական կոնսուլտացիան լուծում է դժվարություններ, սիստեմաբար ստուգելով ուսանողների աշխատանքը, ուստի շատ բնական է, վոր նա պետք է ընդգրկե իբրև յելակետ հեռակայի ուսուցման աշխատանքի կազմակերպությունը: Աշխատանքը կանոնավոր կերպով տանելու մասին ցուցմունքներ տալն ամենալավ կերպով կապահովի ուսուցման աշխատանքի նորմալ ընթացքն ու վորակը:
Վերջապես, առարկան մշակելուց հետո կոնսուլտացիոն բյուրոյում կարելի յե բանավոր հաշիվ տալ ստուգողական աշխատանք ներկայացնելու փոխարեն:
Այսպես՝ բյուրոների կոնսուլտացիոն աշխատանքը կարող է ստանալ հետևյալ կառուցվածքը:
1.) Հեռակաների ուսուցման աշխատանքի կազմակերպություն:
2.) Կոնսուլտացիա դժվարությունները լուծելու և յուրացման ճշտությունն ու վորակը վորոշելու համար:
3.) Հեռակայի ուսման աշխատանքի հաշվառքն ու վերահսկողությունը և այդ հիման վրա
4.) Անցկացող առարկաների վերաբերյալ հաշվետվություն:
Ուսումնական կոնսուլտացիան լայն ծավալով ամենալավ կերպով կարելի յե իրագործել խմբակային կոնսուլտացիայի ժամանակ: Այդ դեպքում կոնսուլտացիան սիստեմատիկ [illegible] է ստանում, վորն ապահովում է կոնսուլտացիոն բյուրոների աշխատանքի նորմալ, անընդհատ, պլանային ընթացքը:
Միևնույն ժամանակ ուսումնական կոնսուլտացիայի խմբակային ձևը թույլ է տալիս ավելի լավ կազմակերպել այն և սեմինարական ձև տալ նրան հիմնական, ամենադժվար դիսցիպլինների մշակման դեպքում: Այդպիսի սեմինարիաները մի քիչ [illegible]վում են Բուհերի սեմինարական աշխատանքի ստացիոնար ձևերից, քանի վոր

աշխատանքն այստեղ կառուցվում է դասընթացի հիմնական բաժինների մշակման վրա:

Անհրաժեշտ է նկատի առնել, վոր կոնսուլտացիոն բյուրո նշանակելով մենք հեռակա ուսուցումն ամենևին չենք վերածում ստացիոնար ուսուցման ձևերին և թե կոնսուլտացիոն բյուրոները բնավ առանձին ստացիոնար ճյուղեր չեն: Ուսուցման նյութի անկախ, ակտիվ մշակումն ու նրա ստեղծագործական յուրացումը հեռակա ուսուցման հիմնական սկզբունքն է, վոր իրեն ստորադասում է կոնսուլտացիան, իբրև արժեքավոր ձև, դպրոցական ուսուցման մոմենտ, վորի նպատակն է հեռակաների ինքնակրթական աշխատանքի հետ կապակցված տալ մաքսիմալ ուսումնական էֆֆեկտ: Կոնսուլտացիան լրացնում է հեռակայի ակտիվ աշխատանքը, ուղղելով ու կարգի բերելով այն և այստեղ կոնսուլտացիայի հիմնական նշանակությունը հենց օգնություն հասցնելն է, բացատրություններ տալը և այլն:

Ցրված սպասարկման այդ ձևերն այն հեռակաների նկատմամբ, վորոնք կուլտուրական կենտրոններումն են ապրում, ուր կազմակերպված են կոնսուլտացիոն բյուրոներ, վորևէ առանձին դժվարություններ չեն առաջ բերում, բոլորովին այլ պատկեր է ներկայացնում սպասարկումն այն հեռակաների, վորոնք կոնսուլտացիոն բյուրոներից հեռու յեն ապրում:

Կոնսուլտացիոն բյուրոների անմիջական սպասարկումն հեռակաների ամբողջ ցրված մասսային անիրագործելի յէ և այստեղ օգնության է գալիս ինքնակրթության նորմերով լայն կերպով օգտագործվող աշխատանքի խմբական ձևը: Խմբակն անհատական աշխատանքի հետ համեմատած ունի մի շարք առավելություններ, վորոնց նշանակությունը պետք է հաշվի առնել, աշխատանքի այդ ձևն օգտագործելիս:

Նախ և առաջ, ինչպես և ամեն մի հավաքական աշխատանք, խմբական աշխատանքը միայնակ ուսանողներին շատ լավ կարգապահության է յենթարկում, բարենպաստ հող ստեղծելով նորմալ ակտիվ ուսուցման համար:

Այնուհետև փոխադարձ օգնության կարգով խմբակն ուսման մի շարք դժվարություններ է լուծում, վոր անհատ-հեռակայի ուժից վեր է:

Ուսման նյութի կոլեկտիվ մշակման պրոցեսում, այդ նյութն ընդգրկվում է ավելի խոր, լիակատար և պարզորոշ կերպով, իսկ նյութի յուրացումը լինում է ավելի հաստատուն: Խմբակում իր գիտելիքների ստուգման կարգով հեռակայն վստահություն է ձեռք բերում, վոր իր գիտելիքը պարզ ու հաստատուն է; և նա ճիշտ կերպով վորոշում է իր աշխատանքի պակասությունները, վորպեսզի ուղղի:

Յերկու դեպքում էլ խթան է ստեղծվում հեռակայի առաջադիմության համար, ստեղծվում է աշխատանքային լիցք:

Վերջապես, յերբ ինքը խմբակը այս կամ այն դժվարության մեջ է ընկ-



նում, նա շատ ավելի պարզորոշ կերպով է հայտնաբերում այդ դժվարությունը, ավելի լավ է ձևակերպում այն կոնսուլտացիոն բյուրոյին դիմելիս: Միևնույն ժամանակ խմբակն ունի մեծ նշանակություն, իբրև կազմակերպչական մոմենտ, վոր միավորում է հեռակաների ցրված մասսան և դարձնում աշխատանքային կոլեկտիվ, ուսումնական միավոր, վորի հետ կոնսուլտացիոն բյուրոները կարող են արդեն հաղորդակցություն ունենալ բանավոր կոնսուլտացիայի կարգով: Արտաքնապես կերպով ղեկավարելով խմբակի աշխատանքը, կոնսուլտացիոն բյուրոները խմբակների համաձայնությամբ ուղարկում են իրենց կոնսուլտանտներին ուսումնական կոնսուլտացիաներ, առանձին առարկայի կամ մի շարք առարկաների վերաբերյալ կոնֆերենցիաներ անցկացնելու համար:

Այսպիսով, խմբակը մի հզոր միջոց է պերիֆերիայի հեռականերին կոնսուլտացիոն բյուրոների աշխատանքի մեջ ներգրավելու համար:

Բյուրոների կոնսուլտացիոն աշխատանքի ծավալման յելակետը պետք է կազմեն հեռակաների ուսումնական կոնֆերենցիաները:

Այստեղ հաջողվում է հայտնաբերել մեր ուսանողների կոլեկտիվի դեմքը: Վերջապես, իբրև կազմակերպված մասսա հեռակաները տալիս են մի շարք կարևորագույն արժեքավոր կորրեկտիվներ, վորոնք նպաստում են ուսուցման աշխատանքի կարգավորմանն ու բարելավմանը:

# Մեթոդական նամակ № 1.

## Ն. Յա. Լինեցկայա. Քաղաքատնտեսության դասընթացի աշխատանքի նյութը և մեթոդական մշակումը.

Քաղաքատնտեսական գիտական դիսցիպլինների սիստեմում, որոնց ուսումնասիրությունը սոցիալ-տնտեսական կրթության ծանրության կենտրոնն է կազմում, քաղաքատնտեսությունը հիմնական նշանակություն է ստանում:

Հետազոտելով արտադրության կապիտալիստական յեղանակը և արտադրության ու փոխանակության նրան համապատասխան հարաբերությունները, որպես „հասարակական զարգացման պատմականորեն անցողիկ աստիճան"[1], քաղաքատնտեսությունը սահմանում է ապրանքա-կապիտալիստական տնտեսության արտադրական հարաբերությունների ծագման, զարգացման և անկման օրենքները:

Միանգամայն պարզ է, որ ինստիտուտի ուսումնական պլանով նշված բոլոր տնտեսական դիսցիպլինների ուսումնասիրությունը պետք է հենվի քաղաքատնտեսության վրա՝ որպես մի գիտության, որը զբաղվում է ընդհանուր տնտեսական պրոբլեմներ և յերևան է հանում ժամանակակից հասարակության տնտեսական զարգացման օրենքը:

Այս դիսցիպլիններից մի քանիսները զբաղվում են քաղաքատնտեսության հետագա խնդիրները և ավելի յեն խորացնում պրոբլեմները, որոնք գիտական մտքի զարգացման հետ զուգընթաց անկախ պրոբլեմների յեն վերածվել (փողը և դրամական շրջանառությունը, վարկի թեորիան), իսկ մի քանիսները իրենց պրոբլեմների մշակման մեջ հիմնվում են տնտեսական զարգացման քաղաքատնտեսության կողմից սահմանված օրենքների վրա (տնտեսական աշխարհագրություն, մեր տնտեսության առանձին բնագավառների եկոնոմիկան):

Վերջապես առանձնահատուկ տեղ է բռնում խորհրդային տնտեսության և տնտեսական քաղաքականության թեորիայի դասընթացը, որոնք կապված են քաղաքատնտեսության հետ:

Այս դիսցիպլինները, որոնք ուսումնասիրում են անցողիկ (կապիտալիզմից սոցիալիզմ) շրջանի եկոնոմիկան, իրենց գիտական վերլուծության օբյեկտ են ընդունում այն փոխհարաբերությունների պրոբլեմը, որոնք առաջ են գալիս պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում սոցիալիստական արտադրական հարաբերությունների և անկայուն մանրավոր-կապիտալիստական հարաբերությունների միջև:

Այդ-իսկ պատճառով խորհրդային տնտեսության եյությունը կարող է հաս-

[1] „Փիլիսոփայության աղքատությունը" Կ. Մարքս:



կացվել միմիայն քաղաքատնտեսության ուսումնասիրության հիման վրա առանձնացնելով խորհրդային տնտեսության թեորիայի առանձին դասընթացը, ինչպես այդ արված է ինստիտուտի ուսումնական պլանի մեջ:

Բոլոր այս նկատառումները պարզում են քաղաքատնտեսության նշանակությունն ու տեսակարար կշիռը ուսումնական պլանում, հավասարապես որոշում են նաև ուսումնական աշխատանքի կարգը, որը պետք է սկսվի քաղաքատնտեսության ուսումնասիրությունից:

Քաղաքատնտեսության նյութը մշակելիս որպես հիմնական ձեռնարկ ծառայի Մարքսի „Կապիտալը": „Կապիտալը", քննադատելով բուրժուական քաղաքատնտեսությունը, յերևան է հանում հակասություններով լի կապիտալիստական հասարակության շարժումը: Հորջափով այդպիսի քննադատությունը ներկայացնում է ընդհանրապես որոշ դասակարգ, նա կարող է ներկայացնել միայն մի դասակարգ-այն դասակարգը, որի պատմական կոչումն է՝ հեղաշրջում առաջացնել արտադրության կապիտալիստական յեղանակում և վերջնականապես վոչնչացնել դասակարգերը, այսինքն նա կարող է ներկայացնել միմիայն պրոլետարիատին"[1]:

Մարքսը պրոլետարիատի տեսաբանն է, այն պրոլետարիատի, որի հեղափոխական թեորիան իրենից ներկայացնում է „դասակարգերի ներկայումս գոյություն ունեցող պայքարի իսկական պայմանների, մեր աչքերի առաջ տեղի ունեցող պատմական շարժման „ընդհանուր արտահայտությունը""[1]:

Այս տեսակետից Մարքսի „Կապիտալի" ուսումնասիրությունը խոր քաղաքական-դաստիարակչական նշանակություն է ստանում, չափելով [?] իսկական կրթությունը, որպես գործուն մի զենք [?] պրոլետարիատի ձեռքում:

Զինված մարքսյան թեորիայի հիմունքների իսկական գիտելիքներով, հետագա [?] ուսանողները վոչ միայն կարող են քննադատաբար վերաբերվել դեպի մարքսիզմի հարցերը շոշափող ամեն մի գրականություն, վոչ միայն կարող են գնահատել առանձին պրոբլեմների մարքսիստական մեկնաբանության ճշտությունը, այս կամ այն դիսցիպլինի սահմաններում, այլև ընդունակ կլինեն „իրենց հաշիվ տալ այն մասին, ինչ կատարվում է իրենց աչքերի առաջ, և իրանց անձերի արտահայտիչները լինելու"[1]:

Միանգամայն պարզ է, որ այդ ուսումնասիրությունը մի շարք դժվարություններ կներկայացնի, որոնց ուժն ու նշանակությունը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր հեռակա [?] ուսանող: Ինքնաշխատանական [?] կրթությունը չի կարող կառուցվել „Կապիտալի" բոլոր չորս [?] հատորների լրիվ ուսումնասիրության վրա, այդ աշխատանքի բարդության

և խորության պայմանով: Սահմանված է վորոշ մինիմում, վորը մատչելի յե դպրոցական ուսուցման համար և վորը ծավալում է առավելապես I հատորի հիմնական գլուխները, ինչպես և „Քաղաքատնտեսության քննադատության առթիվ" աշխատությունը:

Այդ մինիմումը առաջնորդող մոմենտ է մարքսիստական աշխարհայացքի ձևավորման պրոցեսում, վորի գոյությամբ վորոշվում է իսկական հեղափոխական-ստեղծագործական այն աշխատանքը, վորն ընկնում է խորհրդային միության յուրաքանչյուր մանկավարժի վրա:

Այսպիսով մարքսիզմի, և մանավորապես „Կապիտալի" ուսումնասիրությունը իր ուժերը սոցիալիզմի շինարարության մեջ դնող յուրաքանչյուր աշխատավորի ամբողջ կյանքի գործը պիտի լինի:

Հաշվելով „Կապիտալի" բարդությանն ու դժվարությանը, Ինստիտուտն այդ աշխատությունը հեռակա ուսանողների ուշադրությանն է հանձնում վորպես, այսպես կոչված, աշխատանքի նյութ, վորպես մարքսյան գիտական թեորիայի սկզբնական աղբյուր, ուսումնասիրվելու հետևյալ նկատառումով:

„Կապիտալի" առաջին հրատարակության առաջաբանում Մարքսը գրում է.
„Բացառությամբ արժեքի ձևի բաժնից այս գիրքը դժվարություն չի ներկայացնում հասկանալու համար: Իհարկե, յես նկատի ունեմ այն ընթերցողներին, վորոնք ցանկանում են մի նոր բան սովորել և, հետևաբար ինքնուրույն մտածել":

Ըստինքյան հասկանալի յե, վոր աշխատանքի այս նյութը մեթոդական տեսակետից պետք է ներկայացվի այնպես, վորպեսզի մեր ուսանողներն իրոք տիրապետեն հեղափոխական գործողության մեթոդին, վորի գոյությամբ „գիտությունը պատմական շարժման գիտակցական արդյունքն է դառնում, դադարում է դոկտրինյորական լինելուց, դառնում է հեղափոխական":

Քաղաքատնտեսությունից մեր ուսանողներին ուղարկվող ուսումնական ձեռնարկի կառուցվածքը յենթարկվել է այս խնդրին, և այդ խնդիրը լուծելու լավագույն միջոցն հենց իրեն՝ Մարքսին ուսումնասիրելն է:

Իր կոնստրուկցիայով այդ դասագիրքը բաժանվում է հետևյալ մասերի.
1) ներածական դասախոսություններ թեմայի շուրջը. 2) առաջադրությունների պլան և նրանց մեթոդական ցուցմունքները. 3) աշխատանքի նյութը և 4) ստուգողական հարցեր, վորպես ինքնահսկողության ձև:

Ներածական դասախոսությունը ամբողջությամբ ծանոթացնում է ուսանողին թեմայի բովանդակության հետ, նշում է նրա ծավալն ու սահմանները, բաժանում է թեման բաղկացուցիչ մասերի իրենց կապակցությամբ և հաջորդականությամբ, առանձնացնում է այն հիմնական պրոբլեմները, վորոնց վրա պիտի կենտրոնանա ուսանողների ուշադրությունը և ծանոթացնում է



մի քանի կարևոր հասկացողությունների հետ, վորոնք թեմայի մշակման համար անհրաժեշտ ոժանդակ նյութ են ստեղծում.

Խիստ հաջորդական պլանով հաշվառելով թեմայի և յենթաթեմայի բովանդակությունը, մեթոդական ցուցմունքները նշում են այն կոնկրետ առաջադրությունները, վորոնց կատարման համար անհրաժեշտ է մշակել, այսպես կոչված, աշխատանքի նյութը:

Աշխատանքի նյութն իրենից ներկայացնում է ամբողջական և միանգամայն ավարտված քաղվածքներ „Կապիտալից" և այլ բնագրերից, վորոնք մեկնաբանում են Մարքսի ուսմունքը: Նրանց ընտրությունը կատարվել է այն հաշվով, վոր ցանկ առնելով Մարքսի կողմից հարուցված առանձին պրոբլեմները մեթոդոլոգիական հետախուզությունների և արգումենտացիայի բարդությունը վորոշակի և ամբողջական ծանոթություն տա ժամանակակից հասարակության կենտրոնական կարգավորման մարքսիստական թեորիայի մասին, կիրառելով սոցիալական յերևույթների վերլուծության և բացատրության մեթոդը, վորի կլասիկ նմուշները տվել է Մարքսը „Կապիտալում":

Վերջապես ստուգողական հարցերի նպատակն է ստուգել, թե տվյալ առաջադրության մշակման պրոցեսում ուսանողի ձեռք բերած գիտելիքները վորքան վորոշակի և հաստատուն են:

Անցնելով թեմայի մշակմանը, անպայման անհրաժեշտ է մեծ ուշադրությամբ կարդալ ամբողջ նյութը: Ներածական դասախոսությունները կամ մեթոդական ցուցմունքները պակաս ուշադրությամբ մշակելու դեպքում կկորչի թեմայի նյութի պարզորոշ ըմբռնումը, առանձին առաջադրությունների կապը և նրանց հաջորդական դասավորությունը, իսկ աշխատանքի նյութի մշակումն էլ կնդունի վոչնչով իրար հետ չկապված պատահական առաջադրությունների բնույթ:

Յուրաքանչյուր առաջադրության նշանակությունը, բնույթը և տեղը պարզելուց և թեմայի հետ ամբողջությամբ ծանոթանալուց հետո միայն պետք է անցնել նյութի մշակմանը:

Աշխատանքի նյութն սկզբում մեծ դժվարություններ կներկայացնի: Այդ պատճառով էլ առաջին փորձերը տպագրական թերթերի կողմից մեծ չի լինի: Հետագա փորձերի ծավալը կմեծանա, վորչափով վոր ուսանողները կսովորեն կարդալ և հասկանալ „Կապիտալի" տեքստը:

Յուրաքանչյուրը պիտի իրեն համար պարզի, վոր դեպի աշխատանքի նյութը յեղած վերաբերմունքը պետք է սկզբունքորեն այլ լինի, քան դեպի քաղաքատնտեսության դասագրքի մնացած մասերը: Եթե ներածական դասախոսությունների և մեթոդական ցուցմունքների վերաբերյալ պահանջվում է ուշադիր յուրացում „Կապիտալի" վերաբերմամբ

պահանջվում է լուրջ ուսումնասիրություն: Այս ուսումնասիրությունը ներկայացնում է ուսանողի ստեղծագործական, հետազոտական աշխատանքը: Տեքստին անհրաժեշտ է վերադառնալ մի քանի անգամ, խորասուզվելով հետազոտական մեթոդի և ժամանակակից հասարակության տնտեսական զարգացման բացատրությունների մեջ, վորոնց նմուշները ուսանողը կգտնի Մարքսի „Կապիտալում": Ամեն անգամ վերադառնալով արդեն մշակված նյութին, ուսանողը մի նոր բան կգտնի, նյութը նրան կներկայանա այլ կողմից, ընդարձակելով ուսանողի ունեցած գիտելիքների ծավալը:

Բավական չի կարելի համարել աշխատանքի նյութի մշակումը, նյութը պարզապես յուրացնելու կարգով. վորչափով ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիմել վերլուծական մեթոդին և նյութի խոր մշակման:

Ներածական դասախոսությունները ու մեթոդական ցուցմունքները հեշտացնում են Մարքսի սկզբնական աղբյուրների ինքնուրույն մշակումը, բայց չեն կարող նրան փոխարինել:

Ինստիտուտը նախազգուշացնում է ուսանողներին, վոր չի կարելի առաջադրած պրոբլեմները հետազոտական միջոցներով վճռելու համար աշխատանքի նյութի մշակումը փոխարինել այս կամ այն հանրամատչելի դասագրքի օգտագործմամբ: Յերբ այդպիսի փոխարինում նպատակահարմար լիներ, Ինստիտուտը, առանց ուսանողներին փորձումների դժվարության մեջ գցելու, նրանց հանրամատչելի դասագրքեր կմատակարարեր: Վերջիններիս մեջ մի շարք աղավաղումների և քաղաքականապես անհիշտ մեկնաբանությունների հետ միասին կան այնպիսի հանրամատչելի մեկնաբանություններ, վորոնք գռեհկացնում են Մարքսիզմը:

„Կապիտալի" վրա ունեցած ստեղծագործական աշխատանքը հայտաբերում է քաղաքատնտեսության, վորպես ուսումնական դիսցիպլինի մի նոր և ուսման սիստեմում կապակցվող կարևոր կողմը — նրա մեթոդոլոգիական բնույթը:

Բուրժուական մտածողներից մեզ ժառանգություն մնացած գիտական մտքի վոչ մի բնագավառ չկա, վորը չպահանջեր արմատական վերափոխություն, վորովհետև գիտությունը դասակարգային բնույթ ունի, յենթարկվելով տիրող դասակարգի պահանջներին ու շահերին:

Հասարակական կյանքի սոցիալիստական ձևերի կառուցման նպատակներին ծառայող գիտական, մանավանդ սոցիալական դիսցիպլինների մեթոդոլոգիայի, ստրուկտուրայի և բովանդակության մշակումը մեր սերնդի գործն է:

Այս խնդիրն իրականացվում է գիտական ուժերի անմիջական փոխազդեցությամբ այն աուդիտորիայի հետ, վորտեղ գիտական աշխատանք է կատարվում: Միանգամայն անհերքելի է „Կապիտալի" ուսումնասիրության վրա



ծավալվող հետազոտական աշխատանքի նշանակությունը գիտական մեթոդին տիրապետելու համար: Ունկնդիրները գիտական մեթոդոլոգիայի մասին տեսական ծանոթություն կստանան դիալեկտիկական մատերիալիզմն ուսումնասիրելիս, վորը հասկանալու համար հեռակա ուսանողին մեծ օժանդակություն ցույց կտա քաղաքատնտեսությունը, և վոր ամենագլխավորն է, կնախապատրաստի և կկուտակի այն կոնկրետ նյութը, կմշակի գիտական աշխատանքի այն մեթոդները, վորոնց տիրապետելով ուսանողն ամբողջությամբ կգիտակցի դիալեկտիկական մատերիալիզմի, վորպես ուսումնական դիսցիպլինի նշանակությունը, և չի մշակի այն վորպես վերացական և չոր նյութ, վոր պահանջվում է ուսումնական պլանը:

Քաղաքատնտեսության ուսումնական ձեռնարկի առաջին պլանն ընդգրկում է յերկու թեմա,— առարկայի և քաղաքատնտեսության ներածությունը և արժեքի պրոբլեմը:

Առաջին թեմայի, այսինքն առարկայի և քաղաքատնտեսության մեթոդի անալիզը մեթոդական տեսակետից նպատակահարմար է դնել դասընթացի վերջում, վորպես ավելի դժվար իմացական պրոբլեմ: Մեր ուսանողներին ուղարկվող ուսումնական ձեռնարկում այդ կարգը պահպանված է: Սակայն աշխատանքի կարգով պահանջվում է նախնական ծանոթություն քաղաքատնտեսության առարկայի, նրա մեթոդի, սահմանների, նրա ու այլ կից սոցիալական դիսցիպլինների միջև յեղած փոխհարաբերությունների մասին: Քաղաքատնտեսության պրոբլեմները ուսումնասիրելու հնարավորության համար անհրաժեշտ նույնպիսի նախնական ծանոթություն է տալիս ներածությունը, այնպես վոր ամբողջ քաղաքատնտեսության շղթայումից հետո, վորպես անցած հանգրվանի, կդրվի իր ամբողջությամբ առարկայի և մեթոդի պրոբլեմը:

Այսպիսով առաջին պրոբլեմը, վորի ուսումնասիրությամբ կսկսեն իրենց աշխատանքը մեր ուսանողները, արժեքի պրոբլեմն է:

Արժեքի թեորիան քաղաքատնտեսության ամենակարևոր պրոբլեմներից մեկն է, վորի մշակմանը պիտի վերաբերվել ամենալուրջ ուշադրությամբ:

Արժեքի պրոբլեմի կենտրոնական նշանակությունը կայանում է նրանում, վոր ընդգծելով արժեքի հասարակական-պատմական բնույթը և դրանով ուսանողներին ըմբռնել տալով փոխանակող հասարակության արտադրական հարաբերությունների մեխանիզմը, արժեքի թեորիան այն մեկնաբանությամբ, վորպիսին տալիս է Մարքսը, հայտաբերում է այդ արտադրական հարաբերությունների զարգացումը:

Արժեքի թեորիայի ուսումնասիրությունը նպաստում է ապրանքային տնտեսության արտադրական հարաբերությունների ըմբռնմանը, վորոնք քողա-

վեծ են լինում առարկաների (ապրանքների) շարժման ուղիները, իսկ ամենագլխավորը, հաշվարկվում է այն օրինաչափությունը, որը գտնվում է ապրանքների վերոհիշյալ շարժման հիմքում:

Վերջին դիտողությունը, որով մենք կվերջացնենք մեր առաջին դիմումը ուսանողներին, կայանում է հետևյալում.– Մշակելով ուսումնական նյութը, անհրաժեշտ է հաշվի առնել այն պահանջների նշանակությունն ու բնույթը, որ առաջադրում է ինստիտուտը ուսանողներին:

Իր կողմից ինստիտուտը ամեն ջանք գործ կդնի, որպեսզի հեռակայի պահանջների կատարումը: Թե՛ մեթոդական ցուցմունքների և թե՛ աշխատանքի նյութի վերաբերյալ ունեցած ամեն տեսակի տարակուսանքների դեպքում բացատրությունների համար պետք է դիմել ինստիտուտին: Տեղերում կոնսուլտացիոն բյուրոների կողմից տրվող գրավոր կոնսուլտացիաները կկարողանան ապահովել հեռակա ուսանողների աշխատանքի կանոնավոր և սիստեմատիկ ղեկավարությունը:

---



Ծրագիր

„Հաշվեկշռի հաշվառքի հիմունքները" դասընթացի.

## 1. Ընդհանուր հիմունքներ

Տնտեսության հաշվառքի անհրաժեշտությունն ու նպատակը: Հաշվառքի պայմանավորումը հասարակության տնտեսական ստրուկտուրայով:

Կապիտալիստական հաշվառքի բնութագիրը, որպես ապրանքային արտադրության և փոխանակության օպերացիաների արտացոլման ձևի բնութագիր: Անհատական կապիտալի շրջանառության պրոցեսը, որպես այդ հաշվառքի բովանդակություն: Կապիտալիստների դասակարգի մենաշնորհը արտադրության կարևորագույն և հիմնական միջոցների վրա, որպես կապիտալիստական տնտեսության և նրա հաշվառքի իրավական հիմունք: Ձեռնարկության վարչակի հաշվարկերումը, որպես կապիտալիստական հաշվառքի նպատակադրում:

Հաշվառքը խորհրդային սոցիալիստական էկոնոմիկայի պայմաններում: Խորհրդային հաշվառքի հիմնական խնդիրներն ու նշանակությունը սոցիալիստական տնտեսության կառավարման, պլանավորման և ռացիոնալացման գործում: Տնտեսական աշխատանքի պլանային պրոցեսների արտացոլումը հաշվառքում— որպես հաշվառքի բովանդակություն: Սոցիալիստական պլանի կատարման հաշվառքը տնտեսահաշվի և դրանից ստացված էֆեկտի տեսակետից, որպես խորհրդային հաշվառքի նպատակադրում:

Տնտեսական հաշվառքի տեսակները: Բալանս (հաշվեկշիռ) և բալանսային հաշվառման սահմանումը: Պլանային բալանս հաշվառքը, որպես խորհրդային սոցիալիստական տնտեսության պլանային գործունեությունը ուսումնասիրելու և ճանաչելու միջոց: Բալանսային հաշվառքի գիտության սիստեմը:

## 2. Բալանսի կազմությունը

Հաշվառքի պատմական պայմանավորվածությունը: Բալանսի կառուցման և պատկերացման մեթոդները: Հաշիվների համակարգությունը և նրանց կլասիֆիկացիան: Տնտեսության միջոցների արտացոլումը բալանսի մեջ արտադրության սֆերայում և նրանց հետագա շարժման սֆերայում: ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության համայնացված և չհամայնացված կորեսպոնդենտների և համաշխարհային շուկայի հետ գործ ունեցող հաշվետնտեսությունների արտացոլումը բալանսում: Ակտիվի և պասիվի բաղադրիչ մասերը: „Հաշիվ կապիտալի" տերմինի անհամապատասխանությունը, որպես բուրժուական հասարակության տնտեսական կատեգորիայի հաշվային արտահայտության խորհրդային պետական բալանսի տեսակետից: Ակտիվը և պասիվը հաշվեկշռելու սկզբունքը:

## 3. Բալանսային հաշվառքի մեթոդոլոգիան

Բալանսային հաշվառքը, որպես տնտեսության գործունեությունը փոխադարձորեն ուսումնասիրելու մեթոդ: Տնտեսական օպերացիաների հիմնական տիպերի ընդհանուր կլասիֆիկացիան նրանց բալանսային բեկման մեջ: Բալանսի դեբետի և կրեդիտի գիտական, տեխնիկական և բառային նշանակությունը: Տնտեսական օպերացիաների հաշվառքի ղեկավար մեթոդը ըստ նրանց փոխադարձ կապակցության և հակադրության հատկանիշների: Դեբետի և կրեդիտի համապատասխանության սկզբունքը:

Գումարները մի հաշվից մյուսին անցկացնելու եղանակը: Հաշիվների մեջ փոխադարձ կորեսպոնդենցիայի սահմանումը տնտեսական օպերացիաների հիման վրա: փոփոխվող և հակափոփոխվող հաշիվների համակարգությունը: Երկանդամությունների և սալդոների հաշվարկ ու շախմատային ամփոփումը:



## 4. Տնտեսական օպերացիաների հաշվառումը

Բալանսի հաշիվների ստորաբաժանումը տնտեսական մասսաների հաշիվների, տնտեսական պրոցեսների հաշիվների և տնտեսական պլանի կենսագործման հաշիվների: Տնտեսական մասսաների արտացոլումը բալանսի նյութական և հաշվետնտեսության հաշիվներում: Տնտեսական պրոցեսների հաշիվների կոնստրուկցիան: Մթերումների պրոցեսի հաշվառքը: Արտադրության պրոցեսի հաշվառքը: Մթերումների և արտադրության ծախսերի կալկուլյացիան: Տնտեսական պլանի կատարման հաշիվների կոնստրուկցիան ըստ տնտեսահաշվի: Արտադրական և մթերման պլանի կատարման հաշիվներ: Արձակուրդի պլանի կատարման հաշիվ: Այդ հաշիվների դեբետի և կրեդիտի բովանդակությունը: Տնտեսական պլանի կատարումից ստացված էֆեկտի հաշվառքը: Ինքնարժեքի իջեցման պլանի թերակատարման և գերակատարման հաշվառքը:

Ծախսերի ու եկամուտների պլանա-բյուջետային հաշիվների բնութագիրը: Տրանսմիտոն հաշիվների, այսինքն, բաշխիչ, լիկվիդացիոն և տրանզիտային հաշիվների սահմանումը: Զույգ հաշիվների համակարգությունը: Զույգ հաշիվների տեսակները ըստ նրանցով արտահայտված հարաբերությունների բնույթի: Արտաբալանսային հաշիվներ:

## 5. Բալանսի նորմավորումը

Բալանսային նորմավորման էությունն ու նշանակությունը: Ֆոնդավորման մեթոդի բնութագիրը: Սոցիալիստական կապիտալների չափերի բալանսային արտացոլումը: Տնտեսական ֆոնդերի տեսակները: Կանոնավորման մեթոդի բնութագիրը: Բալանսի կոնտրարային հաշիվների համակարգությունը: Բյուջետավորման մեթոդի էությունը: Բալանսի գնահատման մեթոդը: Ծածկելու եղանակների և բալանսի կեղծման քննադատությունը:

## 6. Բալանսային հաշվառման տեխնիկան

Հաշվային փաստավորման նշանակությունը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման համապատասխանությունը: Ժամանակագրական, կլասիֆիկացիոն և համախառն գրանցման կառուցումը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառքի ռեեստրների փոխադարձ ստուգումը: Սխալների ուղղումը և գրանցումները ստոռնելու (հակառակ հոդվածով ուղղելու) յեղանակները:

Քարտային-կոպիրային հաշվառքի տեխնիկան: Հաշվի պլանի կառուցումը: Առանձին ոպերացիաների հաշվառման տեխնիկայի հիմնական սկզբունքները: Ամսվի պրոցեսը: Տնտեսության ինվենտարիզացիան և ստուգաթափակիչ բալանսը: Հաշվետվությունը:

Հաշվառքի իտալական, գերմանական, ֆրանսիական և ամերիկական ձևերի համառոտ բնութագիրը:

---



# Մեթոդական նամակ № 2

## Յա. Մ. Գալպերին. Բալանսային հաշվառման հիմունքները. Պրակ առաջին.

ՖՏԳ-ԱՆՀԻ-ի առաջ դրված խնդիրների մեջ հաշվառման մասնագետների պատրաստությունը շատ եյական տեղ է գրավում: Ինստիտուտի յերեք ֆակուլտետներից հաշվա-տնտեսական ֆակուլտետն այժի չի ընկնում մասնագիտությունների դիֆերենցիացիայով և ծրագրի բարդությամբ: Յեվ սա պատահական չէ: Տնտեսական կյանքը բազմազանակերպ է իր կազմակերպչական ձևերով և այս վերջիններից յուրաքանչյուրը պայմանավորում է թե այլ տնտեսական միավորների հետ ունեցած հաշվետվությունների և թե առանձին տնտեսական միավորների հիմնական և շրջանառության միջոցները կազմող նյութական, գույքային հաշվառքի ձևավորման յուրահատուկ բնույթը:

Տվյալ մոմենտին գոյություն ունեցող պայմաններում, հաշվի գործն ուսումնասիրողի դրությունն առանձնապես ծանր է. ձեռքի տակ յեղած ձեռնարկները գրված են կապիտալիստական տնտեսավարության ձևերի համար. նրանց մեծ մասամբ կրկնում են կապիտալիստական հաշվառման մեր պայմանների համար հնացած ձևերը: Կառուցվող սոցիալիզմի բուռն տեմպերի կարկերակը դեռ զարդ ու փշուր չի արել հաշվառումը սովորելու համար գոյություն ունեցող „ձեռնարկների" և ոժանդակ գրքերի իներտ ձևերը:

ՖՏԳ-ԱՆՀԻ-ն իր վրա շատ դժվարին, բայց և պատմականորեն անհրաժեշտ մի խնդիր է վերցրել.— իր կառուցվածքով ու բովանդակությամբ նոր ոժանդակ գրքեր տալ հաշվի գործն ուսումնասիրելու համար, տալ այնպիսի ձեռնարկներ, որոնցով կարելի կլինի սովորել, թե ինչպես պիտի կազմակերպել և կառուցել սոցիալիստական հաշվառումը:

Խնդիրը հեշտ չէ, և, իհարկե, միմիայն Ինստիտուտի դասատուների կոլեկտիվը միանգամից վճռել դժվար թե կարողանա: Այդ խնդիրն իրագործելու համար պետք է աշխատանք թափի հեռակա ուսանողների ամբողջ բազմահազար կոլեկտիվը, որը գործնական աշխատանքի յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում է այն բոլոր դժվարություններին, որոնք բղխում են հաշվի թեորիայի (և նրան լուսաբանող որինակելի ձևերի) սոցիալիստական շինարարության կարգավմամբ ստեղծված պրակտիկայից ունեցած հետամնացությունից: Հուսով ենք, որ հաղորդելով

մեկ իրենց փորձերը, ընկերները կօգնեն ինստիտուտին լուծելու մեր առաջ դրված ընդհանուր խնդիրը:
Դեպքով և Ժիվանով վաճառականներ կամ առևտրական գներ „վորդիք Աբրիկոսովներ" ու „Յեղբայրք Յելիսեյեվներ", վորոնց ոպերացիաների ճկունությամբ ու հաշվառումով փայլում են գրադրկայում յեղած ցուցանակները, այլևս գոյություն չունեն Խորհրդային Միության տերիտորիայում, նրանք գծագրվում են մեր առաջ վորպես հեռու պատմական անցյալի մշուշոտ պատկերներ, և, իհարկե, այս որինակների վրա չէ, վոր հաշվի գործի խորհրդային պրակտիկ աշխատավորը սոցիալիստական հաշվառում պիտի սովորի, իհարկե այս որինակներով չպիտի պարզաբանի ու լուսաբանի իր տեսական հիմունքները խորհրդային դասատուն և տեսաբանը: Մեր արդյունաբերական միությունների և տրեստների պրակտիկայից, մեր „տորգերի" և „սնաբների" պրակտիկայից, մեր կոոպերատիվների պրակտիկայից, մեր սովխոզների ու կոլխոզների պրակտիկայից պիտի վերցվեն որինակները՝ լուսաբանելու սոցիալիստական հաշվառման թեորիան:
Խորհրդային Միության տնտեսության սոցիալիստական վերակառուցումը մենք տանում ենք պլանային կարգով: Համամիութենական սեկտորի միասնական ժողովրդա-տնտեսական պլանն ընդգրկում է տնտեսական յերևույթների ճնշող մասիվը, բաժանվելով իրար հետ օրգանապես կապակցված գործունեության պլանների՝ արդյունաբերության, գյուղական տնտեսության, փոխանակության, տրանսպորտի բնագավառում և այլն:
Պլանով սոցիալիզմ կառուցող բանվոր դասակարգի ոգնականները,- ռեսուրսների հաշվառման գործում, վորն անհրաժեշտ է արդֆինպլան կառուցելու համար, և այդ պլանի իրագործման կոնտրոլի գործում հաշվառումի դրության ժամանակակից ետապում - հանդիսանում են ստատիստիկն ու հաշվապահ-եկոնոմիստը: Սոցիալիստական հաշվառման ձևավորվող թեորիան նրանցից յուրաքանչյուրին համապատասխան տեղ կհատկացնի ընդհանուր գործում:
Բոլոր կոլեկտիվներն ընդհանուր գործ են կատարում, բանվոր դասակարգի գործը՝ սարքելու և վերասարքելու համար կյանքը, կառուցելու համար սոցիալիզմը: Ինչպես միասնական մարդկային կոլեկտիվը, այնպես և ընդհանուր սեփականությունը նյութական ռեսուրսների ձևով, կազմակերպվածորեն բաժանված են առանձին բջիջների, առանձին մեծ կամ փոքր տնտեսական միավորների: Յուրաքանչյուր տնտեսական միավորին, նրա առաջ դրված խնդիրների իրագործման համար, հատկացված է անհրաժեշտ քանակությամբ միջոցներ: Հաշվի առնել, գնահատել այդ միջոցները, իմանալ թե նրանցից վորքան ունի վորոշ մոմենտում



յուրաքանչյուր տնտեսական միավոր — ահա այն խնդիրներից մեկը, վոր կանգնած է այդ տնտեսական միավորի հաշվի ապարատի առաջ: Խնդիրը պարզական է, բայց նա պահանջում է հատուկ գիտելիքներ և հատուկ պատրաստություն, — պետք են նորմաներ և գնահատման հաստատուն մեթոդներ, պետք է կլասիֆիկացիա այն բոլոր առարկաների, վորոնք մտնում են տնտեսական միավորի նյութական գույքի կազմի մեջ:
Այստեղ ոգնության է հասնում բալանսային հաշվառման գիտությունը, վորն ոգտվում է հաշվումներից ինչպես իրեն ղեկավարող մեթոդից: „Բալանսային հաշվառման գիտությունը ուսումնասիրում է տնտեսավարության հետ կապված տարբեր պրոցեսները: Այս խնդրում նա ունի իր ղեկավար տեսանկյունը: Նա ուսումնասիրում է մարդկանց տնտեսական գործունեության տեխնիկական կողմը տնտեսական աշխատանքը հաշվելու հիման վրա: Նա տնտեսավարության այդ պրոցեսներն ուսումնասիրում է նրանց համաչայնեցնելու տեսակետից, նրանց ռացիոնալ և խնայողաբար կատարելու տեսակետից, նրանց հաշվումի վերջնական եֆեկտի տեսակետից" (Գալլյերին,— Բալանսային հաշվառման հիմունքները"):
Բալանսային հաշվառման գիտության առանձնահատկությունը հաշվումների թվային մեթոդով ոգտվելու մեջ կայանում է նրանում, վոր նա բոլոր նկատվող փաստերը հաշվում է մի ընդհանուր և միասնական չափանիշով (դրամական գնահատություն) և ոգտվում է իր առանձին „գիտական թեորիայով", վորի անունն է <u>Բալանս</u> կամ հաշվեկշիռ:
Տնտեսական ջերի (տնտեսության) կարգավորման յուրաքանչյուր պատմական աստիճանին համապատասխանում է հաշվառման առանձին, յուրահատուկ ձև: Տնտեսության կապիտալիստական ձևը հաշվառմանը տալիս է նրա փիրոզ „սոցիալական պատվերը" — բուրժուական հասարակության հաշվառումը հավատարմությամբ կապիտալիստական ծառայություն է տանում: — „Կապիտալիստական հասարակության մեջ միմիայն փոխանակության գործողություններ կատարելով, անհատը գիտակցում է կոլեկտիվիզմի որենքը: Այսպես ամբողջ տնտեսական օրգանիզմը կարծես թե բաժանվել է առանձին ատոմների, իր մեջ պարփակված առանձին բջիջների, վորոնք մասնավոր սեփականության իրավունքներով պատկանում են առանձին սեփականատերերի և արտաքուստ կարծես թե անկախ են մեկը մյուսից: Շուկան ու փոխանակությունը ծառայում են նրանց միջև վորպես ղեկավարող ուժ: Յերբ փոխանակության գործողությունը հաջողությամբ է պսակվում (իսկ այս կապիտալիստական պայմաններում նշանակում է՝ ստացված է վաստակ), անհատն ստանում է ապացույց, վոր նա ինչվոր հանրոգուտ գործ է կատարել: (Գիլֆերդինգ):

Բնական է, որ այս պայմաններում հաշվառումը պարփակվում է առանձին հատ-հատ ձեռնարկությունների սահմաններում։ Այնտեղ նա կոչված է արտացոլելու անհատական կապիտալի շրջանառությունը, նրա բոլոր տեղափոխություններն ու փոփոխությունները (Գալպերին)։ Կապիտալիստական տնտեսավարության ուղեցույց աստղը վաստակն ու հարստանալն է։ Այստեղից առաջանում է մի այլ առաջադրություն, որ դրվում է կապիտալիստական հաշվառման առաջ – հայտաբերել այն վաստակը, որ ստացվել է տնտեսական գործունեությունից։

Խորհրդային տնտեսավարության պայմաններում, սոցիալիստական շինարարության պայմաններում հաշվառումը պրոլետարական պետության «սոցիալիստական ծառայությունն» է դառնում, նա բոլորովին այլ «սոցիալական պատվեր» է ստանում։ Առանձին տնտեսական կազմակերպությունները այժմ իրենցից ներկայացնում են որպես ընդհանուր տնտեսական օրգանիզմի կազմակերպված ու խնամքով գծված մասնիկները։ Նրանք մեկը մյուսի հետ չեն մրցում, նրանք չեն ձգտում «գզլելու» վաստակը մեկը մյուսի ձեռքից իր փիրող շահերի համար, որովհետև նրանց տերը մեկն է – սոցիալիզմ կառուցող բանվոր դասակարգը։ Նրանց ղեկավարները պրոլետարական պետության և սոցիալիստական պետության շահերի թելադրանքն են։

Առանձին տնտեսական կազմակերպությունների ղեկավարներն այս պայմաններում խորհրդային երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության ղեկավարների միասնական ու ամուր շղթայի առանձին օղակներն են միայն (Գալպերին)։

Եվ այժմ դեռ հաշվառումը կազմակերպված է առանձին տնտեսական կետերում, խորհրդային տնտեսության միասնական ամբողջություն կազմող առանձին բջիջներում, բայց մենք գնում ենք դեպի ամբողջ երկրի ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի հաշվառումն ամբողջապես վերցրած։ Խորհրդային տնտեսության պլանային բնույթը, որը դուրս է վանել արտադրությունից կապիտալիստական անարխիան և կապիտալիստական շուկայի փոխանակության տեղակ սահմանել է բազմաման մեծ պլանայնություն, հաշվառման առաջ մի նոր խնդիր է դնում.– արտացոլել տնտեսական այն բոլոր պրոցեսները, որ կապված են տվյալ տնտեսության պլանը կյանքի մեջ անցկացնելու հետ, հետևել նրա կատարմանը, ազդանշան տալ յուրաքանչյուր դեպքում, երբ շեղում կնկատվի այդ պլանից։

Ժամանակակից խորհրդային սոցիալիստական հասարակությունը չի կարող զարգանալ առանց փարեցպարի կուտակելու, նա չի կարող զարգանալ առանց ընդլայնված արտադրության, որի ժամանակ ներտնտեսական կուտակումները պատկանում են ոչ թե առանձին տնտեսական կազմակերպություններին, այլ ամբողջ բանվորական պետությանը։



ընդլայնված վերարտադրության չափերը հաշվելը խորհրդային հաշվառման երրորդ խնդիրն է։

Հաշվառումը խորհրդային պայմաններում այսպիսով սկզբունքորեն այլ նշանակություն է ստանում, քան կապիտալիստական տնտեսավարության պայմաններում։

Չնայելով մեր մոտ հաշվի բջիջների կազմակերպված ձևավորումը դեռ ևս առայժմ հարմարեցված է համայնացված սեկտորի արտաքուստ կարծես թե առանձնացրած տնտեսական կազմակերպություններին, չնայելով հաշվառման տեխնիկական եղանակները հիշեցնում են հին ձևերը, սակայն հաշվառման բովանդակությունը արմատապես փոխված է, նա պլանային սոցիալիստական շինարարության գործիքն է դառնում։

Ավելի մանրամասը խոսելով այս բնութագրության մասին, կարելի է ասել, որ խորհրդային պայմաններում հաշվառման առաջ ծառանում են նոր կարևոր խնդիրներ.– ցույց տալ իսկական խնայողություն կենդանի բանվորական ուժի տնտեսական գործունեության պրոցեսում, տեխնիկական սարքավորման ինչպես նպատակահարմար և տնտեսական օգտագործում և բոլոր նյութական ռեսուրսների մոբիլիզացիա, ցույց տալ արտադրության ծախսերի իջեցում, իսկ դրանով ռեալ աշխատավարձի բարձրացում։ Հաշվառումը պետք է տեղեկություններ տա ամբողջ տնտեսական գործունեության հասարակական էֆեկտի մասին, ցույց տալով թե ինչպես աշխատանքի արտադրողականությունը աճում է և արտադրողական ուժերը զարգանում են սոցիալիստական շինարարության ուղղությամբ՝ պրոլետարիատի աշխատանքային վերելքի և խանդավառության հիման վրա (Գալպերին)։

Եթե հիշենք ԽՍՀՄ ամբողջական տնտեսության՝ միասնական ժողովրդա-տնտեսական օրգանիզմի առանձին-առանձին բջիջների կազմակերպված կերպով բաժանվելու պայմանականությունը, ինչպես և նյութական ռեսուրսների՝ այս կարծես թե առանձնացրած տնտեսական կազմակերպությունների միջև բաժանվելու պայմանականությունը, այն ժամանակ պարզ կլինի ձևականորեն կարծես թե առանձնացած կյանքով ապրող այս տնտեսական կազմակերպություններին անկախ հաշվային բջիջները հարմարեցնելու անհրաժեշտությունն ու պայմանականությունը։ Ստացվում է հաշվի սպասարկների ամբողջ սիստեմ, ամբողջ շղթա, որոնց թիվն այնքան է, որքան տնտեսական կազմակերպություններ կան միասնական խորհրդային տնտեսության սիստեմում։ Այդ կազմակերպություններից յուրաքանչյուրի տնտեսական նշանակությունը, տեղն ու դերը, ընդհանուր մեր սոցիալիստական տնտեսության ընդհանուր ժողովրդա-տնտեսական պրոցեսի վրա ունեցած ազդեցությունը բնութագրվում է նրա բալանսով, որը դուրս է բերվում հաշվառման տվյալների հիման վրա։

Որքան բարդ է տնտեսությունը, որքան մեծ է նրա մասշտաբն ու թափը, այնքան ավելի մեծ է հաշվառման նշանակությունը, այնքան անհրաժեշտ և գնահատելի յէ նրա մատուցած բազմակողմանի ծառայությունը շինարարության, և առաջին հերթին, իհարկե, տնտեսական շինարարության գործում:

Մարքսը հաշվառման այդ դերը բնութագրում է այսպես. „Հաշվի գրքեր պահելն ավելի անհրաժեշտ է կապիտալիստական արտադրության մեջ, քան մանր արհեստի և գյուղացիական արտադրության մեջ. նա ավելի շատ անհրաժեշտ է կոլեկտիվ, քան թե կապիտալիստական արտադրության մեջ: Հաշվի գրքեր պահելը դառնում է այնքան ավելի անհրաժեշտ, որքան ավելի պրոցեսը զարգանում ու հասնում է հասարակական չափերը և որքան ավելի նա կորցնում է իր անհատական բնույթը („Կապիտալ", հատոր II):

Այս բնութագրման լույսի մեջ պայծառ գծագրվում է հաշվառքի զարգացման հսկայական դերը և աննախընթաց անհրաժեշտ թափը գյուղական տնտեսության զարգացման այժմյան էտապում, յերբ տասնյակ միլիոնավոր գյուղացիական միանձնյա տնտեսություններ անցնում են համատարած կոլեկտիվացման, կառուցում են կոլեկտիվ տնտեսություններ և հաշվառման գործի սկիզբն են դնում նրանց մեջ:

„Հաշվառում և կոնտրոլ", ասում է Լենինը, — „ահա այն գլխավորը, ինչ պահանջվում է, որպեսզի կոմունիստական հասարակության առաջին ֆազը կարգի ընկնի և ճիշտ գործի" (հատոր XXI, եջ 400): Յեվ որքան ավելի ընդարձակ է համայնացված սոցիալիստական սեկտորը, որքան ավելի մեծ չափով նա կընդգրկի ժողովրդական տնտեսությունը, այնքան ավելի ու ավելի պիտի աճի հաշվառման նշանակությունը:

Բալանսային հաշվառման առաջին և հիմնական հարցը, որը և դրվում է մշակման համար III–V առաջադրություններում, բալանսը (հաշվեկշիռը) և նրա տարրերն են:

Այս դասախոսություններում, ինչպես և ամբողջ կուրսի ընթացքում առաջադրվող նյութն ուսումնասիրելիս, անհրաժեշտ է լավ հիշել, որ բալանսի հասկացողությունը անքակտելիորեն կապված է որոշ տնտեսության, որոշ տնտեսական կազմակերպության, այսպես կոչված տնտեսական միավորի հետ:

Բալանսը յուրաքանչյուր տվյալ մոմենտին տվյալ տնտեսական կազմակերպության, տվյալ տնտեսական միավորի գույքի կարողության արտահայտությունը, լուսանկարն է: Այդ տնտեսական միավորի կյանքի մի շարք մոմենտներում վերցրած բալանսների համեմատությունը նրա տնտեսական գործունեության բնութագիրն է տալիս, ցույց է տալիս, թե այդ գործունեության զարգացումը ինչ ուղղությամբ և ինչ գծերով է ընթացել:

Բալանսը չի կարելի պատկերացնել վերացական կերպով, բալանսը միշտ



բնութագրում է որոշ տնտեսական միավորի, նրանում կազմված հաշվառման տվյալների համաձայն: Սրան չի հակասում ընդհանուր—ժողովրդատնտեսական բալանսի հասկացողությունը, բայց այս դեպքում ևս ամբողջ ժողովրդական տնտեսությունը հասկացվում է որպես կազմակերպչական–միասնական մի միավոր և հաշվի տեսակետից մի ամբողջություն, որի վերաբերմամբ կենտրոնացված է նրա բոլոր տարրերի հաշվառումը:

Հիշելով բալանսների այս դերը, մենք նրանցից յուրաքանչյուրի մեջ կարող ենք և պետք է փնտրենք պատասխան այն հարցին, թե ինչ ռեսուրսներ ունի տնտեսական միավորը: Այդ հարցի պատասխանը մենք կգտնենք բալանսի ակտիվում, այնտեղ մենք կգտնենք ռեսուրսների հիմնական խմբերը— արտադրական միջոցներ, ապրանքային միջոցներ, դրամական միջոցներ. ռեսուրսների բոլոր խմբերը յուրաքանչյուր բալանսում տրված կլինեն դրամական գնահատությամբ: Մյուս հարցը, որին բալանսը պատասխան է տալիս բալանսը կարդալ իմացողին, — դա նա յէ, թե տվյալ տնտեսական միավորը որտեղից է ստացել այդ ռեսուրսները, այլ խոսքերով, թե որոնք են տվյալ միավորի միջոցների մատակարարման աղբյուրները: Այս հարցի պատասխանը մենք կգտնենք բալանսի պասսիվում: Յուրաքանչյուր տնտեսական միավորի վերաբերմամբ այս աղբյուրները կարող են յերկու տեսակ լինել.

1) կամ միջոցները տվել է նրան այդ տնտեսական միավորի կազմակերպողը որպես կանոնադրության ֆոնդ և այլն (հնացած տերմինոլոգիայով՝ կապիտալ, կոոպերացիայի փայերի կապիտալ և այլն). 2) կամ այդ տնտեսական միավորը ռեսուրսներն (միջոցներն) ստացել է այլ տնտեսական միավորներից. Վարկային ռեֆորմից հետո, այս դերում մեզ մոտ ճնշող կերպով հանդես է գալիս Պետբանկը: Նշված կարգով աճող միջոցները վերաբերում են առաջին խմբակին, նրանք կարծես տնտեսական միավորը կազմակերպող օրգանի սեփականությունն են կազմում և այդ տնտեսական միավորի կազմակերպիչ օրգանի կամքի համաձայն նպատակային որոշ նշանակություն են ստանում, յեթե ամբողջությամբ այդ արդեն չի նախատեսված այն կանոնադրության մեջ, որ ընդունված է այդ տնտեսական միավորն առաջանալիս:

Հաշվառման նպատակով թե՛ ռեսուրսների և թե աղբյուրների կենտրոնացումը կատարվում է բալանսի հոդվածների այսպես կոչված նոմենկլատուրայի համաձայն, որն արտացոլում է տվյալ տնտեսական միավորի առանձնահատկություններն ու բնույթը: Բալանսի հոդվածների նոմենկլատուրայի մշակումը իր տեսակի մի քննություն է այն անձի համար, որը գլխավորում է տնտեսական միավորի հաշվի ապարատը, և հանդիսանում է գլխավոր աշխատանքը հաշվի պլանը կազմելիս:

Հիշելով հիմնականը, այն է տնտեսական միավորն ու բալանսը, նյութի մշակումն ու նրա յուրացումն առանձին դժվարություն կը ներկայացնի:
Բալանսի առանձին հոդվածների փոփոխությունները, որ տեղի յեն ունենում այս կամ այն ժամանակամիջոցում, արդյունք են տնտեսական միավորի այն օպերացիաների, որ կատարում է նա այլ տնտեսական միավորների հետ, այսինքն տալիս է իր մոտ յեղած այս կամ այն ռեսուրսները այլ տնտեսական միավորների և նրանցից ստանում է դրանց փոխարեն այլ տեսակի ռեսուրսներ:
Տնտեսական միավորների բալանսներում փոփոխություններ առաջացնող օպերացիաների ուսումնասիրությունը հետևյալ դասախոսությունների զբաղմունքների առարկան կլինի:
Հենց այստեղ անհրաժեշտ է հիշել, որ բալանսի անփոփոխությունը (ստատիկա) յերկարատև չէ, որ տնտեսության դինամիկան, որպես հետևանք, առաջացնում է նաև բալանսի դինամիկա:
Բայց այդ մասին ես կխոսվի „Բալանսային հաշվառման հիմունքները" դասընթացի հետագա դասախոսություններում:



# Մեթոդական նամակ № 3.

Ա. Միխեյեվ. Տարրական մաթեմատիկայի դասընթացը. Պրակ առաջին.

Դուք սկսում եք սովորել մաթեմատիկա: Ընդհանուր կրթական առարկաների մեջ մաթեմատիկան առաջնակարգ տեղերից մեկն է բռնում: Այդ իսկ պատճառով կարևոր է գիտենալ թե՛ մաթեմատիկայի նշանակությունը, և թե նրա սովորելու մեթոդները:
Մաթեմատիկայի նշանակությունը դառնում է պարզ հենց նրա անվան ծագումից: Մաթեմատիկա բառը ծագել է հունարեն „մաթեմա" բառից, որ նշանակում է „գիտություն" կամ „ուսմունք":
Մաթեմատիկայի նշանակությունը դառնում է ավելի պարզ, յերբ մենք փորձենք թվել գիտության այն բնագավառները, որտեղ գործադրություն ունի մաթեմատիկան: Գոյություն ունի այն կարծիքը, թե մենք չգիտենք այն յերևույթը, ինչ արտահայտված չէ թվերով: Միայն այն ժամանակ, յերբ մենք տվյալ յերևույթը չափել և սահմանել ենք այդ յերևույթի մեջ մասնակցող բոլոր մեծությունների միջև գոյություն ունեցող կապի օրենքը, միայն այդ ժամանակ մենք կարող ենք ասել, որ տվյալ յերևույթը մենք հասկացել ենք և նա մեզ ծանոթ է արդեն:
Մեծությունների միջև կապը սահմանել հնարավոր է միմիայն մաթեմատիկայի օգնությամբ: Մի շարք գիտությունների մեջ առարկայի մաթեմատիկական մշակումն այնքան նշանակալից է, որ, օրինակ, գործ են ածում այսպիսի անուններ, — „մաթեմատիկական ֆիզիկա", „մաթեմատիկական վիճակագրություն" և այլն:
Այստեղից յերևում է, որ մաթեմատիկան կիրառվում է բոլոր գիտություններում և բոլոր հետազոտությունների ժամանակ: Մաթեմատիկայի սկզբնական խնդիրները կայանում էին հաշվի գործնական արվեստի և գծերի, մակերևույթների ու ծավալների չափման արտածման մեջ: Հողերի մակերեսների, կանոնավոր ապրանքների ծավալների չափումը և առարկաների հաշիվը հարուստ նյութ տվին դեռևս մեր ժամանակից շատ և շատ առաջ մաթեմատիկական գիտությունների հիմքը դնելու: Մաթեմատիկայի ամենահին դոկումենտը պետք է ընդունել Ռինդի պապիրուսը, որի ծագումը պետք է վերագրել մեր ժամանակից 3600 տարի առաջ յեղած դարա-

շրջանին․ Բայց նույն այդ պապիրուսի մեջ ցուցմունքներ կան ավելի հին աղբյուրների վերաբերյամբ, վորոնք 4000 տարվա պատմություն ունեն: Այդ պապիրուսի բովանդակության համաձայն հին յեգիպտացիների մաթեմատիկական գիտելիքները բավական աչքի էին ընկնում:

Ներկայումս մաթեմատիկան զարգացման մեծ չափերի է հասել, բաժանվել է մի շարք առանձին գիտությունների և ծառայություն է մատուցանում բազմաթիվ ու բազմազան գիտությունների:

Մաթեմատիկական բոլոր գիտությունները կարելի է յերկու մասի բաժանել – տարրական մաթեմատիկա և բարձրագույն մաթեմատիկա, վորն սկսեց զարգանալ մեր դարաշրջանի 17-րդ դարից սկսած:

Տարրական մաթեմատիկայի մեջ են մտնում՝ թվաբանությունը, հանրահաշիվը, յերկրաչափությունն ու յեռանկյունաչափությունը:

Բարձրագույն մաթեմատիկան իր մեջ պարունակում է մի շարք առանձին դիսցիպլիններ:

Ֆինանսական գիտության մեջ գործադրվում է առաջին հերթին տարրական մաթեմատիկան.– տոկոսների, մակերեսների, ծավալների, հարաբերությունների հաշվումը, ֆորմուլների կազմումը և այլն,– ահա այն գործնական խնդիրները, վոր յուրաքանչյուր քայլափոխում դնում է կյանքը և վորոնք կարող են լուծվել տարրական մաթեմատիկայի օգնությամբ:

Տնտեսական կյանքի ժամանակակից զարգացումը մեզնից պահանջում է չսահմանափակվել տարրական մաթեմատիկայով, այլ գնալ ավելի հեռու: Ամբողջ ժամանակակից տեխնիկան ինժեներից պահանջում է գիտենալ բարձրագույն մաթեմատիկայի մի շարք բաժիններ (դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվումներ). վիճակագրողն ու ապահովագրական գործի աշխատակիցը չի կարող աշխատել առանց հավանականության թեորիայի և այլն:

Ինչպես պետք է աշխատել մաթեմատիկան սովորելիս: Այս հարցը չափազանց կարևոր է, վորովհետև մաթեմատիկայի սովորումը կարող է լինել կամ հեշտ կամ շատ դժվար: Սովորելը հեշտացնելու համար կարելի է տալ մի շարք ցուցմունքներ, վորը պետք է կատարել ամբողջությամբ: Մաթեմատիկա սովորողը վոչ մի րոպե չպետք բաժանվի մատիտից ու թղթից: Հաճախ սովորողը, կարդալով այս կամ այն բաժինը, զգում է վոր նա հասկացել է կարդացածը, և դրանով էլ սահմանափակվում է: Բայց դա չի նշանակում, թե նա մշակել և յուրացրել է տվյալ բաժինը: Յուրացնելու համար հենց պետք է մշակել, այսինքն կատարել, գրել բոլոր արդյունքները, բոլոր հաշվումներն ու բոլոր դատողությունները, և հետո այնպես պետք անել, վորպեսզի սովորողը կարողանա ինքնուրույն կրկնել դատողությունների ամբողջ շարքը, ապացուցելու համար այս կամ այն թեորեմը կամ հանելու համար այս կամ



այն կանոնը:

Այդ բանին պետք է հասնել, բայց վոչ մի դեպքում անգիր անելով: Անգիր սովորածը հասկացում չէ և հեշտությամբ մոռացվում է, և վոր ամենագլխավորն է սովորողին չի տալիս այն մեթոդը, վորի օգնությամբ նա կարողանա դուրս բերել թեորեմը և կանոնը, յերբ նա մոռացված է:

Վերցրեք մատիտը և արեք բոլոր դատողությունները, նայելով գրքին: Ապա մի կողմ դրեք բաց արած գիրքը և փորձ արեք կրկնել և գրել բոլոր դատողություններն անգիր (ինքնուրույն), առանց նայելու գրքին: Մեծ մասամբ այդ ձեզ չի հաջողվի: Բայց այնուամենայնիվ հենց առաջին անգամից դուք կարող եք սկսել առաջին նախադասության թեկուզ կեսից, օրինակ, „Վերադնենք յեռանկյունը յեռանկյան վրա...": Ինչպես պետք վերադնել: Դուք մոռացել եք: Այդ ժամանակ, ինչպես ասում են, նայեք „մի աչքով" գրքին, այսինքն կարդացեք միայն սկիզբը այն տեղի, վոր մոռացել եք. „այնպես, վոր AB ուղիղը համապատասխանի $A_1B_1$ ուղիղի հետ..." և փորձ արեք հիշել կամ, ավելի ճիշտ, գլխի ընկնել, թե ինչպես պետք դատել այնուհետև: Յեթե հիշեցիք, շարունակեք դատողությունը մինչև այն տեղը, վորտեղ մոռացել էիք, և ապա նորից նայեցեք գրքին, միայն այնպես, վորպեսզի կարողանաք հուշել հետագա միտքը կռահել:

Մի շարք այդպիսի „հուշումներից" հետո դուք կհասնեք մինչև թեորեմի վերջը: Սկսեք նորից ապացուցել թեորեմը ճիշտ այնպես, ինչպես առաջ: Այս անգամ ավելի քիչ ստիպված կլինեք գրքին նայելու: Յերրորդ կրկնողության դեպքում „հուշումների" թիվն ավելի կպակասի և այլն: Վարժվեք այդպես այնքան ժամանակ մինչև վոր դուք ի վիճակի կլինեք կրկնելու ապացուցումները ամբողջությամբ, առանց գրքին նայելու: Գործն արդեն արված է: Հետևյալ կամ յերրորդ օրը կրկնեցեք ձեր մշակած նյութը, և կրկնողությունը տարեք նույն ձևով, ինչպես անում էիք սկզբում սովորելիս. աշխատեք դատողությունները կրկնել ինքնուրույն. յեթե վորևէ բան մոռացել եք, թող գիրքը ձեզ հուշի, բայց միմիայն հուշի. յեթե յերկրորդ օրը ապացույցները վատ ընթանան, պետք է մի անգամ էլ կրկնողություն անել յերկու-յերեք օրից հետո:

Յուրաքանչյուր կանոնի համար գրքում տրված կլինի մի կամ մի քանի լուծված օրինակներ: Այդ օրինակները պետք է լուծել սկզբից մինչև վերջ: Յեթե դուք բավականանաք միմիայն բերանացի քննելով օրինակը, շատ բան կարող է ձեզ համար մութ մնալ. այդ մթությունը յերևան կգա, յերբ դուք ինքնուրույն կերպով կսկսեք լուծել վարժությունները: Ամենալուրջ ուշադրություն դարձրեք գրածի ճշտության վրա: Սովորական գրության մեջ վորոշ անճշտություն կարելի

չի թույլ տալ, վորովհետև բառի կամ արտահայտության ընդհանուր միտքը ոգնում է մեզ հասկանալու պարզ չգրված տառերը կամ նախադասությունները: Բայց նույն բանը չի կարելի ասել մաթեմատիկական արտահայտությունների նկատմամբ: Ամեն մի պարզ կերպով չգրված թվանշան կամ տառ առիթ է տալիս սխալների: Այսպես, օրինակ, 1, 4 և 7 թվանշաններն արագ գրելիս նման են լինում իրար. իսկ թվանշանի յուրաքանչյուր սխալ սխալներ է առաջացնում արտահայտությունների մեջ, իսկ այդ սխալները կամ բոլորովին յերևան չեն գալիս, կամ յերևան են գալիս միայն խնդրի վերջում. Նույնպես պարզ պետք է գրել հանրահաշվական տառերն ու նշանները: Հաճախ $b$ տառն այնպես են գրում, վոր նա նման է լինում 6 թվանշանին. $g$ տառի ներքևի ծայրը հաճախ անում են վոչ թե սուր, այլ կլոր, և հետևանքում ստացվում $q$ տառը: Հունական $\alpha$ (ալֆա) տառն անփույթ գրելիս լատինական $x$ տառի կամ բազմապատկման նշանի տեսք է ընդունում: Նշանները պետք է պարզ լինեն. հանման նշանը պետք է գրվի ինչպես գծիկ, և վոչ թե ստորակետի պես, վորը նման է լինում հաճախ մի կետի (բազմապատկման նշան): Զգույշ յեղեք նշաններն ուղղելիս: Միշտ ավելի լավ է նորից գրել, քան ջնջել ու մրոտել: Մանավանդ այդ բանը պետք է կիրառել, յերբ + նշանը ուղղելով − եք նշանակում: Ինչքան ուզում եք մրոտեք պլյուսի ուղղաձիգ գիծը, նրա ծայրերը յերևում են, և այդպիսի մրոտումից հետո ստացված նշանն ավելի նման է լինում պլյուսի, քան մինուսի: Պլյուսը մինուսով ուղղելիս, կարելի յե գրածը ջնջել ռետինով կամ նորից արտագրել:

Կարելի յե նշել գրության հետևյալ կանոնները.

1) Յուրաքանչյուր տառ, թվանշան և նշան պետք է պահեն իրենց բնորոշ, իրենց միայն հատուկ գծերը:

2) Թվանշաններն (ու տառերը) պետք է գրվեն կատ-կատ, յերբեք չպետք է միացնել նրանց մասնական գծերով:

3) Տասնորդական կոտորակներում ստորակետն ամբողջի և կոտորակային մասի միջև պետք է գրված լինի պարզ և չպետք է նմանի վոչ կետի և վոչ էլ մեկ միավորի:

4) Հասարակ կոտորակների բաժանման գիծը պետք է լինի միանգամայն հորիզոնական և պետք է գտնվի ամբողջ թվանշանի մեջտեղում: Ուրեմն պետք է գրել $\frac{4}{7}$ և վոչ 4/7, կամ $2\frac{2}{5}$ և վոչ 2 2/5: Տպագրության մեջ կոտորակների բաժանման գիծը յերբեմն թեք է լինում, սակայն տպագրական ճշտությունը բոլորովին այլ է և չի կարելի համեմատել ձեռագրի ճշտության հետ: Մանավանդ հաճախ են լինում այն սխալները, վոր առաջանում է խառը թվի կոտորակի թեք գիծը:



թեք գիծը հանրահաշվական արտահայտություններում կարող է առաջացնել մի շարք թյուրիմացություններ: Այսպես, օրինակ, 3/2a արտահայտությունը կարող է հասկացվել $\frac{3}{2}a$ կամ $\frac{3}{2a}$:

5) Յերբ դուք պետք է գրեք կոտորակ, նախ քաշեք բաժանման գիծը և հետո գրեք համարիչն ու հայտարարը:

6) Հավասարության նշանով միացրեք միմիայն իսկապես հավասար մեծությունները: Այսպես, յեթե պետք է հաշվել $8+7-6$, չի կարելի գրել այսպես. $8+7=15-6=9$, վորովհետև $8+7$ հավասար է 15-ի, և վոչ թե $15-6$: Այս հաշվումը գրելիս պետք է բաժանել յերկու հավասարության.

$$8+7=15$$
$$15-6=9$$

Հաճախ խառը թվերով գործողություն կատարելիս բաց են թողնում ամբողջ թվերը, և վերջը, կոտորակների հետ գործողություն կատարելուց հետո, հիշում են ամբողջները, և գրում են գործողությունը մերթ ամբողջ թվերով, մերթ առանց ամբողջի, միացնելով իրար հետ հավասարության նշանով: Այսպես, օրինակ, գրում են.

$$3\frac{2}{3}+4\frac{1}{2}=\frac{2\cdot 2+1\cdot 3}{6}=\frac{7}{6}=1\frac{1}{6}+7=8\frac{1}{6}$$

Այս դեպքում $3\frac{2}{3}+4\frac{1}{2}$ արտահայտությունը հավասարեցնում ենք $\frac{7}{6}$-ին, իսկ $\frac{7}{6}$-ը հավասարեցնում ենք $8\frac{1}{6}$-ին, մի բան, վոր իհարկե ճիշտ չէ: Մանավանդ հաճախ են պատահում այս սխալները հանրահաշվական փոխակերպումների ժամանակ:

7) Տողադարձ կատարեք միմիայն +, − և = նշաններով, կրկնելով նշանը թե՛ տողի վերջում և թե հետևյալ տողի սկզբին:

8) Այն բոլոր հաշվումները, վորոնք պահանջում են մի շարք առանձին գործողություններ, դասավորեցեք գործողությունները կատարման կարգով, նշանակելով նրանց կարգը համարներով: Թյուրիմացություններից խուսափելու համար, համարը պետք է առանձնացնել փակագծով, և վոչ թե կետով կամ ստորակետով:

9) Մի արտահայտություն մյուս արտահայտությունից բաժանելու համար կամ տարբեր փոխակերպումներն իրարից զատելու համար գործ ածեք կետ-ստոր: Այդ բաժանումը ստորակետով չի կարելի անել, վորովհետև ստորակետը գործ է ածվում տասնորդական կոտորակներում ամբողջ մասը կոտորակային մասից բաժանելու համար. կետը մաթեմատիկայում բազմապատկման նշան է, գծիկը (տիրեն)՝ հանման նշան, յերկու կետը՝ բաժանման նշան և այլն: Մաթեմատիկական նախադասության վերջում կարելի յե կետ դնել: Բայց կրկնում ենք, դուք շատ սխալներից կազատվեք, յեթե մաթեմատիկական ա-

գործողությունները բաժանելու համար գործ ածել բացառապես կետ ստորը:
Օրինակ. 7·8 = 5635 − 27 = 864 : 4 = 163 + 5 = 8
Այս արտահայտությունը կարող է մեծ տարակուսանքներ առաջացնել:
Գործողությունները բաժանելու համար ստորակետ դնենք.

7·8 = 56, 35 − 27 = 8, 64 : 4 = 16, 3 + 5 = 8

Դարձյալ շփոթություն կա: Չի վերանում շփոթությունը, յեթե ստորակետի տեղ կետ գործ ածենք.

7·8 = 56. 35 − 27 = 8. 64 : 4 = 16. 3 + 5 = 8

Դնենք կետ ստոր.

7·8 = 56; 35 − 27 = 8; 64 : 4 = 16; 3 + 5 = 8

Ամեն ինչ արդեն պարզ յեղավ:
Յերբեմն նյութը մշակելիս դուք հարկադրված կլինեք դառնալու և վերհիշելու վորոշ կետեր նախորդ առաջադրություններից: Յեթե ձեզ համար պարզ չի, թե նախորդ առաջադրությունների վոր կետի համար է ակնարկված վերհիշելու համար, ապա բաց արեք մատնանշված տեղը և թարմացրեք այն ձեր հիշողության մեջ: Առանց դրան շատ բան ձեզ համար մութ կլինի և դուք մշակման համար շատ ավելորդ աշխատանք և ժամանակ կգործադրեք: Յուրաքանչյուր բաժին մշակելուց հետո վճռեցեք վարժություններում զետեղված բոլոր խնդիրներն ու օրինակները: Աշխատեցեք վճռել ինքնուրույն, առանց նայելու պատասխաններին: Վճռումից հետո աշխատեցեք ինքնուրույն կերպով ստուգել ստացված պատասխանը: Յուրաքանչյուր առաջադրության մեջ ցույց տրված կլինեն պատասխանների ստուգման յեղանակները: Բոլորից հետո համեմատեցեք ձեր ստացած պատասխանը գրքի պատասխանի հետ: Յեթե պատասխանները տարբեր լինեն, աշխատեցեք հասնել ճիշտ պատասխանի: Իսկ յեթե ի վիճակի չեք լինի ճիշտ պատասխան ստանալու, այդ դեպքում հարցում արեք ինստիտուտին:
Առաջադրության վերջում զետեղված են „ստուգողական հարցեր“: Այդ հարցերին պետք է պատասխանել: Յեթե դուք յուրացրել եք առաջադրության բովանդակությունը, ապա պատասխանները ձեզ դժվարություն չեն պատճառի: Յեթե դուք ի վիճակի չեք լինի պատասխանելու այս կամ այն հարցին, ապա նայեցեք առաջադրության համապատասխան բաժինը և պատասխան տվեք: Բաց մի թողեք և վոչ մի բաժին, ինչքան էլ նա ձեզ հեշտ թվա և կրկնեցեք անցածն ամեն անգամ, յերբ այդ առթիվ առիթ կլինի — այն ժամանակ մաթեմատիկան սովորելը դժվար չի լինի:



Հեռակա ուսուցման պրակտիկան ցույց տվեց, վոր անհրաժեշտ է ամենալայն կերպով օգտագործել անմիջական կենդանի կապը դասատուի և ուսանողի միջև, վորի դեպքում վերջինս կարող է ստանալ բոլոր անհրաժեշտ ցուցմունքներն ու բացատրությունները այն բոլոր տարակուսանքների վերաբերյալ, վոր առաջանում են նրա մեջ ուսումնական նյութը սովորելու պրոցեսում: Հատ-հատ սխալները, սխալ հասկացված տեղերը դասագրքում հեռակա ուսուցման պայմաններում առաջացնում են ուսումնական նյութի սխալ յուրացում և գիտելիքների թերարժեք սիստեմ: Ուսանողի աշխատանքին ուղղել գրավոր կոնսուլտացիայի կամ ստուգողական աշխատանքների ռեցենզիայի միջոցով հաճախ չի հաջողվում շնորհիվ այն բանի, վոր հնարավոր չէ հեռու տեղից լրիվ կերպով ստուգել ուսումնական նյութի յուրացման վիճակը և դրսևորել ուսանողների դժվարություններն ու տարակուսանքները: Հենց դրանով էլ դանդաղում է ուսումնական մասի նորմալ ընթացքը: Իր ժամանակին նախազգուշացնելու և ուսումնական նյութի սխալ ըմբռնումն ուղղելու անհրաժեշտությունը առաջ է քաշում բերանացի կոնսուլտացիայի խնդիրը, վորպես ուսումնա-մեթոդական ղեկավարության ավելի ճկուն ձև, քան գրավոր կապը:
Ուսումնա-մեթոդական ղեկավարությունը հեռակա ուսանողների մասսային տեղերում ավելի մոտեցնելու նպատակով, Ինստիտուտը ծավալում է կոնսուլտացիոն բյուրոների մի ցանց: Կոնսուլտացիոն հիմնարկների դերն է բերանացի խորհուրդներով սիստեմատիկ և անմիջական օգնություն ցույց տալ հեռակա ուսանողների մասսային նրանց ուսումնական աշխատանքում: Կոնսուլտացիոն բյուրոների աշխատանքի հիմնական ձևը ուսանողների կանոնավոր խմբական կոնսուլտացիան է, վորն ապահովում է ուսումնական նյութի ճիշտ ըմբռնումն ու յուրացումը և ուսանողների բուն աշխատանքի նորմալ ընթացքը:
Կոնսուլտացիոն բյուրոների նորմալ աշխատանքը պետք է մոբիլիզացիայի յենթարկի ուսանողների ուշադրությունը, վորովհետև մի շարք կազմակերպչական միջոցառումներ անցկացնելը, մանավորապես արտադրական պրակտիկայի կազմակերպելը, շահագրգռված ձեռնարկությունների, գերատեսչությունների և հիմնարկների ուշադրություն գրավելը, հեռակա ուսանողի աշխատանքի համար նորմալ պայմաններ ստեղծելը, դժվար իրականանալի կլինեն առանց ուսանողների ակտիվ մասնակցության և հասարակական օգնության:

## Հեռակա ուսանողներին վերապահվող արտոնությունները:

Հեռակա ուսուցումը մասսայականացնելու նպատակով Անդրֆինժողկոմատի կոլլեգիան անհրաժեշտ համարեց՝

1. Վերապահել հեռակա ուսանողներին ամսական լրացուցիչ յերկու ազատ որ:

2. Պարգևատրել առանձնապես առաջադիմող հեռակա ուսանողներին, վերցնելով ֆինմարմինների հաշվին ծախսերի այն մասը, վոր կրում են ուսանողները իրենց ուսուցման համար:

3. Ամառվա ընթացքում վերապահել հեռակա ուսանողներին լրացուցիչ տասնորյա արձակուրդ:

Կոլլեգիայի վորոշումը տարածվում է ֆինմարմինների, Պետբանկի, Խնայողական դրամարկղների և Պետվարկի բոլոր աշխատավորների վրա: Զակնարկոմնասը արդեն տարածել է այս արտոնությունները իր ապարատի աշխատավորների վրա:

Միջոցներ են ձեռք առնված, վորպեսզի հիշյալ արտոնությունները տարածվեն այլ վերատեսչությունների աշխատավորների վրա:

Մանրամասների մասին հաղորդվելու յե „Դասախոսությունների հավելվածների" մոտակա համարներից մեկում:

ՀՍԽՀ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0044968